## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**13 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1177- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N Մ-170-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2016 թվականի դեկտեմբերի 8-ի գրությունը և 2016 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռը (134 համակարգիչ մոնիտոր և 2 բազմաֆունկցիոնալ սարք՝ 132,818.00 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, «Ձվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-ժողովի 2016 թվականի մարտի 18-ի «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-170-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1066-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## Հայաստանի ամերիկյան համալսարան

Հայաստան ներկրվող համակարգիչների և համակարգչային սարքավորումների ցանկ

| | Վաճառող | Ապրանք | Քանակ | Արժեք | Ընդ. արժեք |
|---|---|---|---|---|---|
| 1. | Elcore Distribution AG | Համակարգիչ մոնիտոր HP 800G2EO AiO NT i76700 1TB 8.0G 8 PC | 134 | $967.00 | $129,578.00 |
| 2. | Elcore Distribution AG | Բազմաֆունկցիոնալ սարք HP LaserJet Enterprise MFP M527dn | 2 | $1,620.00 | $3,240.00 |
| | | Ընդամենը | | | $132,818.00 |

Հաշիվ ապրանքագրի համար՝ 201601289

Հաշիվ ապրանքագրի ամսաթիվ 02.12.2016 թ.

Կնիք՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1178 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի դեկտեմբերի 7-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպություն կողմից ձեռք բերված 2 հատ արևային ինվենտոր և մոնտաժման հարմարանքները (69.5 կգ ընդհանուր քաշով, 1,760.1 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ) և 31 հատ ֆոտոբոլտային պանելը (653 կգ ընդհանուր քաշով, 3,254.73 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ), փոխադրման ծախսերը կազմել են 142,000 դրամ «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպություն կողմից իրականացվող «Հարմարվողականության փոքր ծրագրերի իրականացում» ծրագրի մասին» N Մ-1078-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**20 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1179 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Առողջ կյանքի ուղի»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի դեկտեմբերի 19-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված և ներմուծված բեռը (85 տեղ, 3,335 կգ ընդհանուր քաշով, 19,870 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 1,500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**22 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1180 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդափոխության համակարգի սարքավորումները (4 տեղ, 1,661 կգ ընդհանուր քաշով, 34,578.9 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 709,250 դրամ, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1181-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ռետինե թվային ժամացույցները (9,900 հատ՝ 20 տեղ, 254 կգ ընդհանուր, 9,009 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,960 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1182-Ա**
**քաղ. Երևան**

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված ավտոմեքենայի պահեստամասերի (28 կգ ընդհանուր քաշով, 2,485.01 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1183 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏԻ ՀԵՏԵՎԱՆՔ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 01.1/80-2/27645-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 02/04/16345-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11869-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 06/3-8/38490-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «ԱԳԱՊԵ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 2,414,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագիրը (կցվում է):

2. «ԱԳԱՊԵ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

| | | |
|---|---|---|
| | | պատճառով փողոցում հայտնված երեխաներին բարեխնամ գործունեությամբ զբաղվեն ծավալելով քրիստոնեական, բարոյահոգևորանական, մտավոր դաստիարակություն, ինչպես նաև երեխաների՝ հետուսումնական մասնագիտական հմտությունների ձեռք բերում: Կողմնորոշիչ արժեքը՝ 200,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>5. Ավտոմեքենաների պահեստամասերի ներմուծման կողմնորոշիչ ընդհանուր արժեքն է 14,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>Ծրագրի շրջանակներում վերոնշյալ բեռների ներմուծում և անհատույց բաշխում: Ծրագրի շրջանակներում նախատեսվող յուրաքանչյուր գործարքի, ինչպես նաև բեռների ներմուծման վերաբերյալ ՀՀ ԿԲԾՀԿ և շահագրգիռ նախարարություններ կներկայացվեն նախապես կազմված և հաստատված պայմանագրեր համապատասխան կազմակերպությունների հետ՝ հաստատված կարգին համապատասխան, մանրամասն ստացվող բեռների ցուցակը և բաշխման ցուցակն ըստ շահառուների: |
| *11.* | *Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր* | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| *12.* | *Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ* | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության, ՀՀ Սփյուռքի նախարարության, ԼՂՀ Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարության, ԼՂՀ Արտաքին Գործերի նախարարության, ՀՀ-ում ԼՂՀ Մշտական Ներկայացուցչության, ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի և Բերձորի քաղաքապետարանի հետ, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու թեմերի՝ մասնավորապես Արցախի թեմի հետ: |
| *13.* | *Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը* | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների միացյալ մեթոդիստական եկեղեցու Հյուսիսային Կարոլինայի և Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի թեմերի, կազմակերպության տնօրենների խորհրդի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ Ն. Մելքոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1184- Ա**
**քաղ. Երևան**

**ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ (WWF-Armenia) ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 01.1/80-2/27831-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 02/14/16689-16, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/22.3/3107-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 05/15.1/5673-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 06/3-8/38199-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) (ՀՀ, քաղ. Երևան, Լյուքսեմբուրգի 7, բն. 19, ՀՎՀՀ՝ 00861992) կողմից իրականացվող՝ 244,197 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Կովկասյան ընձառյուծի պահպանությունը Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

3. Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արարատի, Վայոց ձորի ու Սյունիքի մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն

Կարեն Մանվելյանի կողմից

«07» դեկտեմբերի, 2016թ.

ստորագրություն

«Կովկասյան ընձառյուծի պահպանությունը Հայաստանում»

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Անհետացման եզրին գտնվող ընձառյուծի պոպուլյացիայի ավելացում և նրա ապրելավայրերի պահպանություն, որպես Հայաստանում պահպանության բարելավման, շրջակա միջավայրի կառավարման ուժեղացման և էկոլոգիական գործընթացների կայունացման ցուցանիշ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային, մաքսային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործ | 1. **Բնության համաշխարհային հիմնադրամի Գերմանիայի մասնաճյուղ** (WWF-Germany)<br>**Հասցե՝** Ռեյնհարդշտրասե 18, 10117 Բեռլին, ԳԴՀ, **Հեռ.՝** +49 30 31 17 77 0, +49 30 31 17 77 199<br><br>2. **Բնության համաշխարհային հիմնադրամի Շվեցարիայի մասնաճյուղ** (WWF-Switzerland)<br>**Հասցե՝** Հոխլշտրասե 110, 810 Ցյուրիխ, Շվեյցարիա<br>**Հեռ.՝** +41 44 297 21 21 |
| 4. | Ծրագրի կատարողը | Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)<br>**Հասցե՝** ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 7շ., բն. 19 (իրավ.), ք. Երևան, Պռոշյան 11/1 (գործ.), ՀՎՀՀ՝ 00861992<br>**Հեռ՝** +374 10 58 89 83, +374 10 54 61 56<br>**Էլ. հասցե՝** office_am@wwfcaucasus.org |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզեր, այդ թվում բնության հատուկ պահպանվող տարածքներ<br>Բնագավառ՝ կենսաբազմազանության պահպանություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 244,197 (երկու հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր իննսունյոթ) Շվեյցարական ֆրանկ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Վայոց Ձորի Արտավան, Սյունիքի մարզի Կարճևան, Նռնաձոր, Տաթև, Գեղի, Լեռնաձոր համայնքներ և համայնքի բնակիչներ, «Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր, «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ, ՀՀ ԲՆ Վայոց Ձորի և Սյունիքի մարզի բնապահպանական պետական տեսչություններ: |



| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2017-30.06.2019 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթ (Շվեյցարական ֆրանկ) | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| 1. Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով նախագծային աշխատանքների իրականացում և կազմակերպում: | 01/01/2017-01/07/2017 | 8050 | հարկազատման անհրաժեշտություն չկա |
| 2. ՀՀ ԲՆ բնապահպանական պետական տեսչության կարողությունների հզորացման նպատակով վառելիքի և այլ նյութատեխնիկական բազայի ապահովում, ինչպես նաև այդ գործողությունների կազմակերպում | 01/01/2017-31/12/2017<br>01.01.2018-31.06.2018 | 10000<br>9067 | |
| 3. ՀՀ ԲՆ բնապահպանական պետական տեսչության համար որսագողության դեմ պայքարի նպատակով մեքենայի ներմուծում, կամ ՀՀ-ից ձեռքբերում: | 01/01/2017-31/12/2017 | 11000 | |
| 4. Կենսաբազմազանության մոնիթորինգի և ֆոտոթակարդներով վայրի կենդանիների դիտարկման իրականացում, կազմակերպում և մեթոդների բարելավում ներառյալ համապատասխան սարքավորումների ներմուծում, կամ ձեռքբերում: | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 33000<br>20179<br>20000 | |
| 5. Համայնքային զարգացման ծրագրերի իրականացում ՀՀ Վայոց Ձորի մարզի Արտավան, Սյունիքի մարզի Կարճևան, Նռնաձոր, Տաթև, Գեղի համայնքներում, ինչպես նաև շինարարական աշխատանքների իրականացում, ենթակառուցվածքների ստեղծում, տնկիների ձեռքբերում, գյուղատնտեսական ծրագրերի աջակցություն, դրանց կազմակերպում և իրականացում: | 01/07/2017-31/06/2018 | 43964 | |
| 6. Բնության հատուկ պահպանվող տարածքների («Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտ) կարողությունների և ենթակառուցվածքների զարգացում, իրականացում և կազմակերպում: | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 11000<br>11000<br>936 | |
| 7. Բնապահպանական տեղեկատվական նյութերի ստեղծում, տպագրում և կազմակերպում | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 1360<br>5000<br>5000 | |

| | | | |
|---|---|---|---|
| 8. Ընձառյուծի պահպանության վերաբերյալ ուսումնական հաստատություններում դասընթացների կազմակերպում և իրականացում | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 962<br>500<br>500 | |
| 9. Ընձառյուծի խնամակալների կողմից իրականացվող մշտադիտարկում և փորձագիտական աշխատանքների իրականացում, կազմակերպում | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 10000<br>10000<br>8242 | հարկազատման անհրաժեշտություն չկա |
| 10. Ընձառյուծի և նրա որսատեսակների մասին տեղեկացվածության մակարդակի վերաբերյալ հարցման իրականացում և կազմակերպում: | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 700<br>700<br>535 | հարկազատման անհրաժեշտություն չկա |
| 10. Գործուղումներ | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 618<br>3000<br>3000 | հարկազատման անհրաժեշտություն չկա |
| 11. Հանդիպումներ | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018 | 1000<br>600 | |
| 12. Գրասենյակային գույքի և սարքավորումների ձեռք բերում | 01.07.2017-30.06.2018 | 1161 | |
| 13. Ճանապարհային ծախսեր | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 2000<br>2500<br>2500 | |
| 14. Ադմինիստրատիվ ծախսեր | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 600<br>700<br>700 | հարկազատման անհրաժեշտություն չկա |
| 15. Գրասենյակի պահպանման ծախսեր | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 1123<br>1500<br>1500 | հարկազատման անհրաժեշտություն չկա |
| Ընդամենը | | 244,197 | |



| | | | | |
|---|---|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Գործարքներ, որոնք ներկայացվելու են հարկազատման | Ժամկետներ | Արժույթ (Շվեյցարակա ն ֆրանկ) |
| | | 1. ՀՀ ԲՆ բնապահպանական պետական տեսչության կարողությունների հզորացման նպատակով վառելիքի և այլ նյութատեխնիկական բազայի ապահովում , ինչպես նաև այդ գործողությունների կազմակերպում | 01/01/2017-31/12/2017<br>01.01.2018-31.06.2018 | 10000<br>9067 |
| | | 2. ՀՀ ԲՆ բնապահպանական պետական տեսչության համար որսագողության դեմ պայքարի նպատակով մեքենայի ներմուծում, կամ ձեռքբերում: | 01/01/2017-31/12/2017 | 11000 |
| | | 3. Կենսաբազմազանության մոնիթորինգի և ֆոտոթակարդներով վայրի կենդանիների դիտարկման իրականացում, կազմակերպում և մեթոդների բարելավում ներառյալ համապատասխան սարքավորումների ձեռքբերում: | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 33000<br>20179<br>20000 |
| | | 4. Համայնքային զարգացման ծրագրերի իրականացում ՀՀ Վայոց Ձորի մարզի Արտավան, Սյունիքի մարզի Կարճևան, Նռնաձոր, Տաթև և Գեղի համայնքներում, ինչպես նաև շինարարական աշխատանքների իրականացում, ենթակառուցվածքների ստեղծում, տնկիների ձեռքբերում, գյուղատնտեսական ծրագրերի աջակցություն, դրանց կազմակերպում և իրականացում: | 01/07/2017 – 31/06/2018 | 43964 |
| | | 5. Բնության հատուկ պահպանվող տարածքների («Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտ) կարողությունների և ենթակառուցվածքների զարգացում, իրականացում և կազմակերպում: | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 11000<br>11000<br>936 |
| | | 6. Բնապահպանական տեղեկատվական նյութերի ստեղծում, տպագրում և կազմակերպում | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 1360<br>5000<br>5000 |
| | | 7. Ընձառյուծի պահպանության վերաբերյալ ուսումնական հաստատություններում դասընթացների կազմակերպում և իրականացում | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 962<br>500<br>500 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 8. Հանդիպումներ | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018 | 1000<br>600 |
| | | 9. Գրասենյակային գույքի և սարքավորումների ձեռք բերում | 01.07.2017-30.06.2018 | 1161 |
| | | 10. Ճանապարհային ծախսեր | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 2000<br>2500<br>2500 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Նկարագիր | Ժամկետներ | Արժույթ<br>(Շվեյցարական ֆրանկ) |
| | | 1. Գործուղումներ | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 618<br>3000<br>3000 |
| | | 2. Հանդիպումներ | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018 | 1000<br>600 |
| | | 3. Գրասենյակային գույքի և սարքավորումների ձեռք բերում | 01.07.2017-30.06.2018 | 1161 |
| | | 4. Ճանապարհային ծախսեր | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 2000<br>2500<br>2500 |
| | | 5. Ադմինիստրատիվ ծախսեր | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 600<br>700<br>700 |
| | | 6. Գրասենյակի պահպանման ծախսեր | 01/01/2017-30/06/2017<br>01.07.2017-30.06.2018<br>01.07.2018-30.06.2019 | 1123<br>1500<br>1500 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, «Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր, ՀՀ Վայոց Ձորի մարզի Արտավան, Սյունիքի մարզի Կարճևան, Նռնաձոր, Տաթև, Գեղի, Լեռնաձոր համայնքների համայնքապետարաններ, «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ, Կովկասի Բնության Հիմնադրամ (CNF) | | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • WWF-Գերմանիա՝ կիսամյակային ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• WWF-Շվեցարիա՝ կիսամյակային ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով՝ եռամսյակային և ամփոփ հաշվետվությունների միջոցով:<br>• Ծրագրի ավարտից հետո ներքին և արտաքին աուդիտ | | |

Փաստաթուղթը կազմեց՝ ծրագրերի ադմինիստրատոր՝ Թամարա Շաքրյանը

07 դեկտեմբերի 2016թ
հեռ՝ (055) 997061

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1185-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-114-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 01.1/80-2/27182-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 06/3-8/37666-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին» ծրագրի մասին» N Մ-114-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2016 թվականի նոյեմբերի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի գնում՝ 6,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1186- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-446-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/06.2/3101-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 01.1/80-2/27958-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 06/3-8/38599-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի ծրագրի մասին» N Մ-446-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N Մ-1134-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արծաթ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08619573) 2016 թվականի նոյեմբերի 18-ին կնքված՝ N «ՇՀԱՊՁԲ-15/21 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/20) պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված 2016 թվականի արտադրության «LADA NIVA 21214» մակնիշի ամենագնաց մեքենայի ձեռքբերում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1187- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-739-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/06.2/3100-16 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 01.1/80-2/28044-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 06/3-8/ 38418-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016-2017 թվականների ծրագրի մասին» N Մ-739-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000271) 2016 թվականի նոյեմբերի 11-ին կնքված՝ N «ԹՈՒԿ-ԲԸԱՇՁԲ-16/01 պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման աշխատանքների իրականացում՝ 98,409,930 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին ու Արարատի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1188- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-854-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** («Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 3/06.2/3104-16 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 01.1/80-2/28043-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 06/3-8/38404-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 15.06.2016 թվականին կնքված արտակարգ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի» N Մ-854-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է), նույն որոշման 2-րդ կետի առաջին ենթակետում «2016 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N «ՇՀԱՊՁԲ-15/1 (ԶԿՀ-ԱՊՁԲ-16/01) պայմանագրի N 1 հավելվածում» բառերից հետո լրացնել «և 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 1 լրացուցիչ համաձայնագրերում» բառերը և «4,618,210» թիվը փոխարինել «5,244,770» թվով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի ժ/պ-ի կողմից
Հ. Հովհաննիսյան
«05» «12» 2016թ.

Հավելված

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 15.06.2016թ. կնքված արտակարգ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կովկասի Բնության Հիմնադրամ, Թյուպենհոֆշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Սյունիքի մարզ, գ.Շիկահող «Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի համար «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում՝ 28 735 300 ՀՀ դրամ: Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 9-ում: |
| 7. | Բարեգործության ստացողը | «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, գ.Շիկահող |

<table>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>01.08.2016թ. - 31.12.2016թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 15.06.2016թ. կնքված արտակարգ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի ծրագիր՝ 01.08.2016թ. - 31.12.2016թ., բյուջեն - 28 735 300 ՀՀ դրամ, այդ թվում՝<br><br>
1. Մեքենաների նորոգում և պահպանում - 3000.0 հազար ՀՀ դրամ 3-4-րդ եռամսյակներ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th></tr>
<tr><td>Ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն</td><td>դրամ</td><td>1</td><td>3000.0</td></tr>
</table>
2. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում - 6700.0 հազար ՀՀ դրամ 3-4-րդ եռամսյակներ, այդ թվում՝
<table>
<tr><th>Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները</th><th>Չափի միավորը</th><th>Ամբողջ քանակը (ծավալը)</th><th>Ընդհանուր գումարը (հազար դրամով)</th></tr>
<tr><td>Բենզին «Ռեգուլյար»</td><td>լիտր</td><td>12768</td><td>4302.19</td></tr>
<tr><td>Դիզելային վառելիք</td><td>լիտր</td><td>2857</td><td>942.81</td></tr>
<tr><td>Սեղմված բնական գազ</td><td>խ.մ</td><td>8500</td><td>1455.0</td></tr>
</table>
3. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում) - 19035.3 հազար ՀՀ դրամ (յուրաքանչյուր եռամսյակ)</td></tr>
</table>

<table>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>1. Մեքենաների նորոգում և պահպանում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 3000,0 հազար ՀՀ դրամ,<br>2. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) –6700,0 հազար ՀՀ դրամ:</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը</td><td>Բոլոր ծախսերն ուղղված են շահառուներին: Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի հետ</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը</td></tr>
</table>

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ

Վ. Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1189- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) 2016 թվականի նոյեմբերի 9-ի N 87 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 01.1/80-2/28566-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 06/3-8/38451-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-939-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն Կարեն Մանվելյանի կողմից,

(ստորագրություն)

«09» դեկտեմբերի, 2016թ

Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում
կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գնիշիկ (Մոզրով), Տաթև, Տաձատափ և Սվարանց համայնքներին աջակցություն ցուցաբերել ապրուստի դիվերսիֆիկացումը զարգացնելու համար՝ ստեղծելով խթաններ և այլընտրանքային ապրուստի միջոցներ վաստակելու հնարավորություններ՝ պահպանելու համար կենսաբազմազանությունը և էկոհամակարգային ծառայությունները, այսպիսով նվազեցնելու բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործը | *Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ),*<br>Հասցե՝ Am Sportplatz 30, 63791 Karlstein am Main, Germany, (Ամ Սփորտպլաթզ 30, 63791, Կառլշտեյն ամ Մայն, Գերմանիա)<br>Հեռ՝ +49 6188 99560<br><br>*և WWF-Գերմանիա:*<br>Հասցե՝ Reinhardtstraẓe 18 10117 Berlin, Germany (Ռեյնհարդշտրասե փողոց 18, 10117 Բեռլին, Գերմանիա)<br>Հեռ.՝ +49 30 31 17 77 0<br>+49 30 31 17 77 199 |
| 4. | Ծրագիրը կատարողը | *Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)*<br>ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 7շ., բն. 19 (իրավ.)<br>ք. Երևան, Պռոշյան 11 (գործ.)<br>ՀՎՀՀ՝ 00861992<br>Հեռ՝ +374 10 58 89 83 |

Մ 16/10.4

| | | |
|---|---|---|
| | | +374 10 54 61 56<br>Էլ. հասցե՝ office_am@wwfcaucasus.org |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայր՝ Վայոց Ձորի մարզի Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ և հարակից տարածքներ, Սյունիքի մարզի Որոտան գետի կիրճը և հարակից տարածքներ:<br>Բնագավառ՝ կենսաբազմազանության պահպանություն և համայնքների զարգացում» |
| 6. | Ծրագրի բյուջեն | 494,021 (չորս հարյուր իննսունչորս հազար քսանմեկ) Եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի մարզեր և հարակից համայնքներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.06.2015-31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 5,853 |
| 2. հողօգտագործման պլանի մշակում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 4,798 |
| 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,047 |
| 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի զերակա պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 8,000 |
| 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 – հունիս 2017 | 9,821 |
| 6. Տեղի ֆերմերների վերապատրաստման միջոցառումների իրականացում | մարտ 2017-հունիս 2017 | 3,054 |
| 7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2016-նոյեմբեր 2016 | 8,712 |



| | | |
|---|---|---|
| 8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն): Գործողության կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 1,375 |
| | հունվար 2016 - դեկտեմբեր 2016 | 8,538 |
| | հունվար 2017 - հունիս 2017 | 15,381 |
| 9. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հոկտեմբեր 2016 -- հոկտեմբեր 2017 | 22,149 |
| 10. Տաթևի տարածաշրջանում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կառուցում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015-դեկտեմբեր 2015 | 0 |
| 11. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | ապրիլ 2016-հոկտեմբեր 2017 | 7,178 |
| 12. Արենի, Խաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 39,174 |
| 13. Տաթև, Սվարանց և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում) | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 26,469 |
| 14. Խաչիկ համայնքին էներգախնայող վառարանների տրամադրում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | նոյեմբեր 2016 | 5,000 |
| 15. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտի այցելուների կենտրոնի և գյուղմթերքի խանութի շենքի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում<br>Վերջինս պատկանելու է երեք համայնքների՝ Գնիշիկ, Խաչիկ և Արենի, կողմից ստեղծված «Գնիշիկ» | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 67,679 |

| | | |
|---|---|---|
| միջհամայնքային հիմնադրամին:<br><br>Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների գյուղմթերքների հավաքագրման և վաճառման խանութի համար ՈՒԱԶ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում | նոյեմբեր 2015 | 13,930 |
| 16. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-դեկտեմբեր 2016 | 14,770 |
| 17. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով: | մայիս 2016-դեկտեմբեր 2016 | 42,669 |
| 18. Այլընտրանքային _ ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով: | մարտ 2016 – դեկտեմբեր 2016 | 32,715 |
| 19. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 17,235 |
| 20. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի արտադրման, փաթեթավորման և իրացման աշխատանքային խմբերի կազմակերպում և վերապատրաստման միջոցառումների և մասնակցային հանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | սեպտեմբեր 2016-սեպտեմբեր 2017 | 54,450 |

Մ.16/10.4



| | | |
|---|---|---|
| 21. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| 22. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| 23. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| 24. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| 25. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| 26. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| 27. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| 28. Հասարակայնության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| 29. Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| 30. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |
| 31. Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |

Մ.16/10.4

| № | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|---|---|
| 10. | | Ընդամենը | | 494,021 |
| | | 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 5,853 |
| | | 2. հողօգտագործման պլանի մշակում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 4,798 |
| | | 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,047 |
| | | 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի գերակա պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 8,000 |
| | | 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 – հունիս 2017 | 9,821 |
| | | 6. Տեղի ֆերմերների վերապատրաստման միջոցառումների իրականացում | մարտ 2017-հունիս 2017 | 3,054 |
| | | 7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2016-նոյեմբեր 2016 | 8,712 |
| | | 8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն): Գործողությաան կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 1,375 |
| | | | հունվար 2016 - դեկտեմբեր 2016 | 8,538 |
| | | | հունվար 2017 - հունիս 2017 | 15,381 |
| | | այգու համար հողի գնում 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ<br>այգու համար գործիքների, տնկիների, սերմերի, [illegible] պարագաների գնում<br>նախատեսվող գումարը` 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Ադմինիստրացիայի սենյակի համար կահույք [illegible] սարքավորում 1,500,000.00 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ* (Ակնկալում ենք օգտվել օրենքով սահմանված հարկային արտոնու-թյուններից) |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սոցիալական Ապահովման Նախարարություն, Առողջապահության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Մայրի» ՀԿ հոգաբարձուների Խորհուրդը, BMZ Հիմնադրամ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**26 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1206 – Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1005-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 01.1/80-2/28641-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/39376-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Այբ» կրթական հիմադրամի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «ՖաբԼաբ արհեստանոց-լաբորատորիա» ծրագրի մասին» N Մ-1005-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունվարի 30-ի N Մ-061-Ա, մայիսի 15-ի N Մ-507-Ա և նոյեմբերի 5-ի N Մ-1172-Ա և 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-250-Ա և հուլիսի 1-ի N Մ-589-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2016թ. դեկտեմբերի 31, տևողությունը՝ 27.5 ամիս» բառերը փոխարինել «2017թ. դեկտեմբերի 31, տևողությունը՝ 39.5 ամիս» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «2016թ. դեկտեմբերին» բառերը փոխարինել «2017թ. դեկտեմբերին» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1207 - Ա**
**քաղ. Երևան**

### «ՓԱՌԱՊԱՆԾ ՄԱՐՏԻԿՆԵՐ» ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 01.1/80-2/28235-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N ՖԲ/ԱնՄ-1-2/12351-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 06/3-8/39154-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից «US ARMENIAN VETERANS ASSOCIATION» կազմակերպության կողմից, «Փառապանծ մարտիկներ» ռազմահայրենասիրական միության հասցեով ստացված բեռի (1085 կգ ընդհանուր քաշով, 1,850 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը բաշխվելու է Արցախյան պատերազմի մասնակից հաշմանդամներին և սոցիալապես անապահով ազատամարտիկներին:

2. «Փառապանծ մարտիկներ» ռազմահայրենասիրական միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### Օգնության ապրանքների ցանկը

Տեղեկացնում ենք, որ ԱՄՆ-ից ուղարկված օգնության բեռը տեղավորված է 36 արկղում: Ուղարկված բեռը բոլորը օգտագործված ապրանքներ են, արկղներում պարունակում են հետևյալ ապրանքները, հետևյալ քանակով և գնով.

| Ապրանքի անվանումը | Քանակը | Գինը | Ընդհանուր |
|---|---|---|---|
| 1. Օգտագործված հագուստ<br>2. Օգտագործված տակաշոր (մանկական) | կգ | 224$ | 224$ |
| 3. Օգտագործված FAX | 4 հատ | 50$ | 200$ |
| 4. Օգտագործված DVD | 4 հատ | 40$ | 160$ |
| 5. Օգտագործված տպիչ | 4 հատ | 30$ | 120$ |
| 6. Օգտագործված էլ.անվասայլակ | 3 հատ | 180$ | 180$ |
| 7. Օգտագործված անվասայլակ | 1 հատ | 45$ | 45$ |
| 8.Օգտագործված հենակներ | 5 հատ | 25$ | 125$ |
| 9. Օգտագործված մեխանիկական անվասայլակ | 3 հատ | 96$ | 96$ |

Ընդհանուր գումարը կազմում է՝ 1150$

Տեղափոխման գումարը կազմում է՝ 700$

Ապրանքի ընդհանուր գինը ուղարկված կազմում է 1850$

Փառապանծ մարտիկների միության նախագահ [illegible]նդապետ Գ. Մարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1208-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 01.1/80-2/28565-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 06/3-8/39794-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N ԱԲ/22.2/14394-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության «Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտի վերահսկողության» դաշնային ծառայության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Ռեֆերենս լաբորատոր կենտրոնի հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված լաբորատոր սարքերի (5 տեղ, 325 կգ ընդհանուր քաշով, 11,104,166.99 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1209-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 01.1/80-1/28568-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 06/3-8/39647-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N ԱԲ/22.2/14370-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված լաբորատոր թեստերի (4 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 2,700 շվեդական կրոնին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 193,700 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) և աճեցված մանրէների (մեկ տեղ, 2 կգ ընդհանուր քաշով, 24 բրիտանական ֆունտ ստեռլինգին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 48,500 դրամ, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1210-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 01.1/80-2/27972-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 06/3-8/38464-16 և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 02/14/16650-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) իրականացվող՝ 3,718,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 01511187) 2016 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպման և անցկացման աշխատանքների իրականացում՝ 3,718,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության գործադիր տնօրեն

Թալար Կազանջյանի կողմից...............

**«8» դեկտեմբերի 2016թ.**

**«Անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների համար կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ: Նախատեսվում է ընդհանուր առմամբ 11 մասնագետների համար անգլերենի դասընթացների անցկացում Հայաստանի ամերիկյան համալսարանում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (հասցե՝ 55 East, 59th Street, New York, NY 10022, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Մարշալ Բաղրամյան 40, Հայաստանի ամերիկյան համալսարան՝ կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 3,718,500 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրը նախատեսվում է սկսել 2016 թվականի դեկտեմբերի 19-ին և ավարտել 2017 թվականի դեկտեմբերի 19-ին: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 11 աշխատակցներ հնարավորություն կունենան մասնակցելու անգլերեն լեզվի կատարելագործման դասընթացներին տարբեր մակարդակներում, ըստ գիտելիքների ստուգման արդյունքների՝ հաշվի առնելով մասնագիտական առանձնահատկությունները: Յուրաքանչյուր դասընթացների տևողությունը միջինը կազմում է 8 շաբաթ: Դասընթացների համար նախատեսված ծախսերը կկազմեն 3,718,500 դրամ: |

16/3

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում 3,718,500 դրամի չափով Հայաստանի ամերիկյան համալսարանից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ | Համագործակցություն չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ՀՀ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց Լենա Բաղդասարյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի տեղակալ ֆինանսական գծով
060 72-22-22

16/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1211-Ա
քաղ. Երևան**

**«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/80-2/26999-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 06/3-8/37616-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 02/14/16198-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11487-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 3,604,550 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագիրը (կցվում է):

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված



ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե,Երևանի քաղաքապետին ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«12»-ը դեկտեմբերի 2016թ.

**«Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Բարեգործական օգնության տրամադրում` սննդի, կենցաղային, տնտեսական, շինարարական ապրանքների և նյութերի հատկացում, բժշկական օժանդակություն, գյուղատնտեսական տեխնիկայի և ապրանքների հատկացում, ուսման վարձի տրամադրում: |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | **Բարեգործը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Շվեյցարիա, Բայնվիլ ամ Զեե, Ֆելդշտրասսե 9)<br>Գերմանիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (Գերմանիայի Դաշնություն, Բադ Զեքինգեն, Շյոնբերգեր Վեգ 1)<br>Հոլանդիայի «Մեննենկինդերեն» բարեգործական կազմակերպություն (Հոլանդիա, Նունսպեեթ 8071, Սպորլաան 1ա) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներ` սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 3,604,550 (երեք միլիոն վեց հարյուր չորս հազար հինգ հարյուր հիսուն) ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | 4,220 շահառու` սոցիալապես անապահով ընտանիքներից, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաներ |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: |



| | | |
|---|---|---|
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 1. ***Ամենամսյա սննդի հատկացում`***<br>***քաղ. Երևան`*** 2,800 շահառու, նախատեսվում է 1,477,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***Արարատի մարզ`*** 52 շահառու: Համայնքներ` քաղ. Արտաշատ - 17 երեխա, քաղ. Վեդի - 10 երեխա, գյուղ Գետազատ - 14 երեխա, գյուղ Մրգանուշ- 10 երեխա, գյուղ Վարդաշեն-1 երեխա: Նախատեսվում է 27,430 ԱՄՆ-ի դոլարին համարժեք սննդի հատկացում:<br>***Կոտայքի մարզ`*** 88 շահառու: Համայնքներ` քաղ. Աբովյան - 50 երեխա, քաղ. Չարենցավան - 18 երեխա, գյուղ Սևաբերդ - 20 երեխա: Նախատեսվում է 46,420 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***Գեղարքունիքի մարզ`*** 1023 շահառու: Համայնքներ` քաղ. Գավառ - 18 երեխա, քաղ. Ճամբարակ 152 երեխա, գյուղ Գետիկ - 138 երեխա, գյուղ Մարտունի - 68 երեխա, գյուղ Այգուտ - 138 երեխա, գյուղ Անտառամեջ - 12 երեխա, գյուղ Չորավանք - 22 երեխա, գյուղ Դպրաբակ - 59 երեխա, գյուղ Կալավան - 22 երեխա, գյուղ Վահան - 172 երեխա, գյուղ Բարեպատ - 5 երեխա, գյուղ Թթուջուր - 128 երեխա, գյուղ Աղբերք - 43 երեխա, գյուղ Լճաշեն-46 երեխա: Նախատեսվում է 539,633 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***Տավուշի մարզ`*** 20 շահառու: Համայնքներ` քաղ. Իջևան - 20 երեխա: Նախատեսվում է 10,550 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***Լոռու մարզ`*** 30 շահառու: Համայնքներ` քաղ. Վանաձոր - 30 երեխա: Նախատեսվում է 15,825 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***Արմավիրի մարզ`*** 132 շահառու: Համայնքներ` գյուղ Արտաշար - 50 երեխա, գյուղ Ալաշկերտ-25 երեխա, գյուղ Գեղակերտ – 57 երեխա: Նախատեսվում է 69,630 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>***Արագածոտնի մարզ`*** 75 շահառու: Համայնքներ` քաղ. Թալին - 42 երեխա, գյուղ Ակունք -32 երեխա: Նախատեսվում է 39562 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սննդի հատկացում:<br>2. *Ապրանքների բաշխում շահառուներին`* 500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով<br>3. *Բուժօգնություն ստանալու միջամտություն`* 140,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով<br>4. *Ուսման վարձի հատկացում`* 80,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով<br>5. *Կազմակերպական ծախսեր`* 558,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով<br>6. **Սննդի, կենցաղային և տնտեսական ապրանքների հատկացում, ուսման վարձի, բուժ. օգնության տրամադրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքներում և գյուղերում`** 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով |

| | | |
|---|---|---|
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. ***Սննդի ծեռքբերում և ներմուծում`*** 2,226,050 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի տոմատի մածուկ, բուսական յուղ, բրինձ, շաքարավազ, հնդկացորեն, ալյուր, մակարոնային արտադրանք և պարենային այլ ապրանքներ:<br>2. ***Ապրանքների ձեռք բերում և ներմուծում`*** մինչև 500,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի բժշկական գործիքներ, բժշկական սարքավորումներ, ատամնաբուժական աթոռներ (տրվում է այն բուժ. հաստատություններին, որոնք կդիմեն դրանք հատկացնելու խնդրանքով), օրացույցներ և բացիկներ, խաղալիքներ, կենցաղային և տնտեսական ապրանքներ, կենցաղային տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, հագուստ, սպասքեղեն և այլ պարագաներ, շինանյութ, գյուղատնտեսական նշանակության ապրանքներ):<br>3. ***Կազմակերպական ծախսեր`*** 106,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (առանց աշխատավարձի)<br>4. **Սննդի, կենցաղային և տնտեսական ապրանքների հատկացում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքներում և գյուղերում`** 95,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | ***Կազմակերպական ծախսերը`*** 558,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որը կազմում է բյուջեի 15,5 %-ը:<br>1. Աուդիտորական ծառայություն` 4,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>2. Աշխատավարձ` 452,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>3. Վառելանյութ` 33,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>4. Էլեկտրաէներգիայի վարձ` 13,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>5. Ջրի վարձ` 1,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>6. Գազի վարձ` 10,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>7. Հեռախոսավարձ և կապ` 25,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>8. Տնտեսական այլ ծախսեր` 20,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, մարզպետարաններ, գյուղապետարաններ, համայնքային սոցիալական ծառայություններ:<br>Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամի, Գերմանիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամի, «Մեննենկինդերեն» բարեգործական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից` օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց` «Դիակոնիա» բ/հ-ի տնօրենի տեղակալ Վ. Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1212-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/80-2/26989-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 06/3-8/37516-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/16012-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11496-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 1,027,290 դրամ ընդհանուր արժեքով «Բնակելի տան մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 221116 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 1,027,290 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

16/5

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբաջյանի կողմից
«25»-ը նոյեմբերի 2016թ.

## «Բնակելի տան մասնակի վերանորոգում»
## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Քաղաք Երևան, Նորագավիթ 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, 4 տուն հասցեում գտնվող բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան՝ սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 1,027,290 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Գևորգյան Ֆլորա (անձնագիր՝ AH0371351, տրվ. 19.04.2007թ. 003 կողմից, հեռ.՝ 055-38-58-18) |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2016 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 2016 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 1,027,290 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 1,027,290 դրամ : |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

5/91

16/6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1213-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/80-2/26987-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 06/3-8/37618-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 02/14/16174-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11500-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 762,300 դրամ ընդհանուր արժեքով «Բնակելի տան աստիճանավանդակի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված՝ N 211116 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աստիճանավանդակի կառուցման աշխատանքների իրականացում՝ 762,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից
«25»-ը նոյեմբերի 2016թ.

## «Բնակելի տան աստիճանավանդակի կառուցում»
## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Արագածոտնի մարզի Պարտիզակ համայնք, 1-ին փողոց, 69 տուն հասցեում գտնվող բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես՝ երկաքթետոնե աստիճանավանդակի կառուցում |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, Պարտիզակ համայնք՝ սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 762,300 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Սոցիալապես անապահով ընտանիք՝ Սարգսյան Մարինե (անձնագիր՝ ն/թ 008727323, տրվ. 20.06.2016թ. 054 կողմից, հեռ.՝ 098-87-52-60) |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2016 թվականի նոյեմբերի 21-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 2016 թվականի նոյեմբերի 21-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում բնակելի տան մասնակի վերանորոգման, մասնավորապես՝ երկաթբետոնե աստիճանավանդակի կառուցման աշխատանքներ՝ 762,300 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 762,300 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1214-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 01.1/80-2/27238-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 06/3-8/37953-16 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N ԱԲ/22.2/13652-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (մեկ տեղ, 42 կգ ընդհանուր քաշով, 16,206.30 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 856.61 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1215-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՀՈՒԿԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 01.1/80-2/27755-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 06/3-8/38600-16 և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 1/06/1518-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել Դահուկային սպորտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզահագուստի (2 տեղ, 37 կգ ընդհանուր քաշով, 6,712.91 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 350 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) և տպագիր նյութերի (մեկ տեղ, 6 կգ ընդհանուր քաշով, 160 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 207 եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1216-Ա**
**քաղ. Երևան**

## «ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 01.1/80-2/27543-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 06/3-8/37987-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Շվեյցարիայի Պոլ Շեռռերի ինստիտուտի (PSI) կողմից, որպես օժանդակություն, «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի հասցեով ուղարկված գիտական սարքավորման (բաղկացուցիչ մասերով և համակարգչով՝ մեկ տեղ, 230 կգ ընդհանուր քաշով, 6,150 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 373,000 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1217-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1058-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 01.1/80-2/27397-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 06/3-8/37952-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի ներքին և արտաքին հարդարման ու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-1058-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2016 թվականի նոյեմբերի 30-ին կնքված՝ N ՎՏՀ/07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե երեսապատման սալիկների մատակարարում՝ 1,971,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1218-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1058-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 01.1/80-2/28056-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 06/3-8/38598-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի ներքին և արտաքին հարդարման ու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-1058-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արտալյան ինդաստրիզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00137948) 2016 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 877,178 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1219-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1058-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 01.1/80-2/28062-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի N 06/3-8/38842-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի ներքին և արտաքին հարդարման ու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-1058-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պենոտեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00456619) 2016 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված՝ N Պ16/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեկորատիվ քիվերի մատակարարում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1220-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1058-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/80-2/26932-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 06/3-8/37634-16 եզրակացությունները,* **որոշում է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի շենքի ներքին և արտաքին հարդարման ու հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-1058-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Եվրոպա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01208043) 2016 թվականի նոյեմբերի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական սպունգի ձեռքբերում՝ 597,312 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մագ - էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2016 թվականի նոյեմբերի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետալոպլաստից միջսենյակային դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,959,680 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1221-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/80-2/26931-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 06/3-8/37117-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է**.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերականգնման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հուն-Սավ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536528) 2016 թվականի նոյեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինության հիմքերի ուսումնասիրման աշխատանքների իրականացում՝ 80,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1222-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 01.1/80-2/27377-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 06/3-8/37956-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N Ֆ/1 115 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1223-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-434-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 01.1/80-2/27396-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 06/3-8/37949-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N Ֆ/1 116 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Համայնքներում խաղադաշտերի կառուցում» ծրագրի մասին» N Մ-434-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը» բառերով:

4) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N 05-11-511 և N 07-64-34-4 պայմանագրերով նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված N 06-1-311 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 209,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) կնքված N 116550038, 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 686 դիմումով, 2004 թվականի նոյեմբերի 25-ին կնքված՝ N 010447655, 2005 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված՝ N 010634092 և 2010 թվականի հունիսի 8-ին կնքված՝ N 113439520 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 3,938,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված՝ N 082/13 պայմանագրում (2016 թվականի հոկտեմբերի 20-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 021/01/02/2012 պայմանագրում (2016 թվականի նոյեմբերի 1-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1,524,012 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1258 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԱՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1341-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 01.1/80-2/27959-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 06/3-8/38201-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի, Իջևան քաղաքներում, Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր վարչական շրջաններում ընտանիքների ամրապնդման և մանկալքության կանխարգելում» ծրագրի մասին» N Մ-1341-Ա որոշմամբ (2016 թվականի դեկտեմբերի 2-ի N Մ-1159-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 01520882) «Ազատև» մասնաճյուղի հետ 2009 թվականի հուլիսի 31-ին կնքված՝ N 015817 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 310,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 00046317) Տավուշի ԳԳՄ-ի հետ 2013 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված՝ N 09108137520 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 453,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 21,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված՝ N 114198702, N 113665644 և 2013 թվականի մարտի 25-ին կնքված՝ N 114198702-S7200171, 2015 թվականի նոյեմբերի 17-ին կնքված N 113665644, 2016 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 118976438 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի և ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 640,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված՝ N 081/13 պայմանագրում (2016 թվականի հոկտեմբերի 20-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 4,320,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 021/01/02/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 376,008 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1259 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1083-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 01.1/80-2/27542-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի 13-ի N 06/3-8/38443-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1083-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «163,748,799 դրամ» բառերը փոխարինել «171,748,799 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2015 թվականի հոկտեմբերի 14-ին կնքված՝ N AT-AU-061-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մատուցել ծառայություններ` 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» դեկտեմբերի 2016թ.

### «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքում մանկապարտեզի կառուցում» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքի բնակիչների կյանքի պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզ, Աղձք համայնք, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 171.748.799,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աղձք համայնքի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ օգոստոսի 08-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 08-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ. օգոստոսի 08-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 08-ը մանկապարտեզի կառուցման աշխատանքների իրականացում՝ 162.148.799 դրամ<br>տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.600.000,00 դրամ |

| | | |
|---|---|---|
| | | «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի կողմից տարեկան աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 8.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից կառուցման աշխատանքների իրականացում՝ 162.148.799,00 դրամ առանց ԱԱՀ-ի<br><br>«Յուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.600.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի կողմից տարեկան աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 8.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի կողմից տարեկան աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 8.000.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Արագածոտնի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1260 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1132-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 01.1/80-2/27758-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 06/3-8/38130-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1132-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետերում «123,965,710 դրամ» բառերը փոխարինել «140,492,410 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և կից ծրագրի 9-րդ ու 10-րդ կետերում «122,765,710 դրամ» բառերը փոխարինել «139,292,410 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1261 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-591-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 01.1/80-2/27757-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 06/3-8/38400-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի գյուղապետարանին հարող տարածքի բարեկարգում, խաչքարի տեղադրում և բուժկետի ցանկապատում» ծրագրի մասին» N Մ-591-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետերում «16,000,000 դրամ» բառերը փոխարինել «22,709,240 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ ու 10-րդ կետերում «15,850,000 դրամ» բառերը փոխարինել «22,559,240 դրամ» բառերով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2016 թվականի նոյեմբերի 17-ը» բառերը փոխարինել « մինչև 2017 թվականի հունվարի 30-ը » բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1262 -Ա**

**քաղ. Երևան**

# «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆՎԵՐՆԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐ ԱՆՀԱՏ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐԻՑ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 01.1/80-2/28325-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/14/17093-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/12384-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/39497-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 150,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երեխաների հովանավորության ծրագրի շրջանակներում նվերների փաթեթներ անհատ հովանավորներից» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային
բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Ժիրայր Էդիլյան

15 դեկտեմբերի 2016թ.

## «Երեխաների հովանավորության ծրագրի շրջանակներում նվերների փաթեթներ անհատ հովանավորներից» Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել բարեկեցիկ միջավայր երեխաների համար՝ համայնքային զարգացման այնպիսի ծրագրեր իրականացնելու միջոցով, որոնցում մեծ դեր ունի երեխաների և նրանց հովանավորների միջև սերտ նամակագրական կապը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Անհատ հովանավորներ Մեծ Բրիտանիայից, ԱՄՆ-ից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Թայվանից, Կանադայից, Իսպանիայից, Բելգիայից, Ավստրալիայից, Չինաստանից, Իտալիայից, Հոլանդիայից և Միացյալ Արաբական Էմիրություններից: |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝+37460491010* |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքներ (համայնքների ցանկը կցվում է):<br>Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Անհատ հովանավորների կողմից մեկ տարվա ընթացքում ուղարկվող փաթեթների արժեքը կազմում է մոտ 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքներում բնակվող 34,800 երեխաները:<br>Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը հաստատում է տվյալ երեխայի ծնողի համաձայնությունը՝ երեխաներին ՎՎՀ-ի կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրերում ընգրկելու մասին: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվարի 2017 թ. – 31 դեկտեմբերի 2019 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է պարբերաբար փաթեթներ ստանալ Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Թայվանում և Կանադայում բնակվող անհատ հովանավորներից՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու, Արագածոտնի մարզերի 209 համայնքներում բնակվող 34,800 երեխայի անունով: Փաթեթներն ուղարկվում են «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի անվանական փոստարկղի հասցեին (P.O. Box 72):<br>Անհատ հովանավորների կողմից մեկ տարվա ընթացքում ուղարկվող փաթեթների արժեքը կազմում է մոտ 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Թայվանում, Կանադայում, Իսպանիայում, Բելգիայում, Ավստրալիայում, Չինաստանում, Իտալիայում, Հոլանդիայում և Միացյալ Արաբական Էմիրություններում բնակվող անհատ հովանավորներից պարբերաբար ստացվելու են փաթեթներ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Լոռու, Արագածոտնի մարզերի 209 համայնքներում բնակվող 34,800 երեխայի անունով և փոխանցվելու են հասցեատերերին:<br>Անհատ հովանավորներից ստացված փաթեթները պարունակում են հետևյալը.<br>✓ գրենական/դպրոցական պարագաներ, գրքեր, դպրոցական պայուսակներ<br>✓ հագուստ, կոշիկ, պայուսակներ<br>✓ հիգիենիկ պարագաներ (շամպուն, օծանելիք, քսուկ և այլն)<br>✓ խաղեր, խաղալիքներ, սպորտային խաղեր<br>✓ ոչ թանկարժեք զարդեր, աքսեսուարներ<br>✓ քաղցրավենիք (կոնֆետներ, բլիթներ, շոկոլադ, մեղր, ջեմ)<br>✓ դեկորացիաներ, զարդանախշեր<br>✓ տան պարագաներ, գործիքներ,<br>✓ էլեկտրոնային փոքր սարքեր, Ֆոտոխցիկներ<br>Փաթեթները ստանալու մասին անհատ հովանավորները տեղեկանում են երեխաների նամակներից, որտեղ նշվում է փաթեթում պարունակվող յուրաքանչյուր ապրանքի անվանումը: Նամակագրության թարգմանությունն իրականացվում է Երեխաների հովանավորության ծրագրի աշխատակիցների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը նվերների փաթեթները ստանում է փոստային ծառայությամբ՝ անվանական փոստարկղի հասցեին (P.O. Box 72):<br>Անհատ հովանավորների կողմից մեկ տարվա ընթացքում ուղարկվող փաթեթների արժեքը կազմում է մոտ 50,000,000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 150,000,000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 209 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հովանավորության բաժնի մասնագետների կողմից:<br>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Հովանավորության բաժնի ղեկավար

Մանյեն Մուրադյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**26 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1263 - Ա**

(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1094-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 01.1/80-2/28639-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/39496-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N Մ-1173-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ») N Մ-1094-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«(2016 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանների փոփոխություն) նշված գործարքը, որով նախատեսվում է ՈՒԱԶ 315195-067 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում (լիզինգային պայմաններով)՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի» բառերը փոխարինել «(2016 թվականի հոկտեմբերի 18-ի և դեկտեմբերի 15-ի պայմանների փոփոխություն) նշված գործարքը, որով նախատեսվում է ՈՒԱԶ 315195-066 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում (լիզինգային պայմաններով)՝ 4,166,666.7 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**27 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1264 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)
**քաղ. Երևան**

## «ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 01.1/80-2/28564-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 02/14/17025-16, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 21-ի ԻԳ/ԳՂ-2/10036-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 06/3-8396561-16 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 01/21.1/5004-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի (ՀՎՀՀ 02600539) կողմից իրականացվող՝ 3,200,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Գյուղատնտեսու-թյան զարգացում» ծրագիրը (կցվում է):

2. «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև



կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՀիմնաՏավուշ» Զարգացման Հիմնադրամի
Գործադիր տնօրեն՝ Մ. Կնոբլյանի կողմից
« 08 » դեկտեմբեր 2016թ.

# «Գյուղատնտեսության զարգացում»

## Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Նպաստել ՀՀ Տավուշի մարզում գյուղացիական տնտեսության զարգացմանը բոլոր ոլորտներում, գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և պարենի անբավարարվածության կրճատմանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարումների գծով, օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Ֆրանսիայի Հայկական Հիմնադրամ՝ գրանցված Փարիզի ոստիկանության կողմից 06.05.1993թվական թիվ 931859 համարի համաձայն: Հասցե՝ Ֆրանսիա 75660 Փարիզ (14) Բե Պե 12 (էլ.հասցե՝ info@fondsarmenien.org) և Ֆրանսիայի Օ-դը-Սեն վարչական շրջան շենք Ռեֆլետ - Դեֆանս - 14, Ֆրանսուա Արագոյի պողոտա: |
| 4 | Ծրագիրը կատարողը | «ՀիմնաՏավուշ» Զարգացման Հիմնադրամ, (Հասցե՝ Կառավարության 3-րդ շենք, Գործունեության հասցեն, ք. Երևան Մաշտոցի պողոտա 5 ա-11 ՀՎՀՀ 02600539 hymnatavush@yahoo.com) |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, գյուղատնտեսական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | **3.200.000** եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Տավուշի մարզի Նավուր, Այգեհովիտ, Ակնաղբյուր, Սարիգյուղ, Խաշթառակ, Լուսաձոր, Ազատամուտ, Աչաջուր, Բերքաբեր, Դիտավան, Լուսահովիտ, Վազաշեն, Գետահովիտ, Կիրանց և Բարեկամավան համայնքների գյուղացիական բնակչությանը, անապահով ընտանիքներին: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հունվար 2017 թվականից մինչև 31 դեկտեմբեր 2020 թվական: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Անասնապահություն<br>• Անասնակերի ձեռք բերում և ներմուծում 2017թ-2020թ.՝ 600.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Գյուղ.մեքենաների և սարքավորումների վերանորոգման ծախսեր 2017թ.՝ 60.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Անասնաբուժական գործիքների ձեռք բերում և ներմուծում 2017-2020թթ.՝ 15.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Տրանսպորտային միջոցների ձեռք բերում և ներմուծում (2 բեռնատար մեքենաներ) 2017- 2020թթ.՝100.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Անասնապահական ֆերմայի սարքավորումների ձեռք բերում, ներմուծում և պահպանման ծախսեր 2017-2020թթ. ՝ 260.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |

- Անասնաբուժական դեղերի ձեռք բերում 2017-2020թթ.՝ 60.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Անասնապահական մինի ֆերմաների կազմակերպում և պահպանում 2017 – 2020թթ.՝ 160.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Ընդամենը՝ ***1 255 000*** եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

<u>Հողագործություն, այգեգործական գյուղացիական տնտեսությունների ստեղծում</u>

- Հողերի ձեռք բերում և վարձակալություն 2017- 2020թթ. 35.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:
  2017թ.-2020թթ. «Գյուղատնտեսության զարգացում» ծրագիրը լինելու է շարունակական ևս 15-20 տարի:
  «ՀիմնաՏավուշ» Զարգացման Հիմնադրամի կանոնադրության (որն անժամկետ է) 8.10 կետի համաձայն Հիմնադրամի լուծարման դեպքում գույքի տնօրինումն կիրականացվի «Հայաստան» համահայկական Հիմնադրամի միջոցով:

- Այգիների ստեղծում 2017թ.-2020թ՝60.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Պտղատու ծառերի, թփերի, սերմերի, ձեռք բերում և տրամադրում գյուղացիական տնտեսություններին՝120 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Ընդամենը՝ ***215 000*** եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

<u>Շինարարություն</u>

- Հեռագնա արոտավայրերի ստեղծում, և նրանց տանող ճանապարհների կառուցում 2017-2020թթ.՝ 200.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:
- Լուսաձոր գյուղի անասնաֆերմայի մեծացման, պահեստային ենթակառուցվածքների կառուցման աշխատանքներ 2017-2020թթ.՝ 200.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Ընդամենը՝ ***400.000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:***

- Անասնապահության, հողագործության, այգեգործության թեմաներով ուսուցման կազմակերպման աշխատանքներ 2017-2020թթ.՝ 240 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Լուսաձոր անասնահամալիրի և գյուղացիական բնակչության օգտագործման համար վերականգնվող էներգիայի սարքավորումների ձեռք բերում և շահագործման ծախսեր՝ 160 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Գրասենյակային և տրանսպորտային ծախսեր՝ 225 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Աշխատավարձ՝ 483 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Աուդիտորական ծախսեր՝ 40 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Կոմունալ վճարումներ՝ 62 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Տարածքի վարձակալություն՝ 60 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

- Չնախատեսված ծախսեր՝ 60 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

| | | |
|---|---|---|
| | | Ընդամենը՝ 1 330 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br><br>Ընդհանուր գումարը՝ **3 200 000** եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների (ներմուծվող) ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը: | • Անասնակերի ձեռք բերում և ներմուծում՝ 600 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Գյուղ.մեքենաների և սարքավորումների վերանորոգման ծախսեր՝ 60 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Անասնաբուժական գործիքների ձեռքբերում և ներմուծում՝ 15 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Տրանսպորտային միջոցների ձեռքբերում և ներմուծում (2 բեռնատար մեքենաներ)՝ 100 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Անասնահամալիրի սարքավորումների ձեռքբերում, ներմուծում և պահպանման ծախսեր՝ 260 000 ՀՀ դրամ:<br>• Անասնաբուժական դեղերի ձեռքբերում՝ 60 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Անասնապահական մինի ֆերմաների կազմակերպում և պահպանում՝ 160 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Հողերի ձեռքբերում և վարձակալություն՝ 35 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Այգիների ստեղծում՝ 60 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Պտղատու ծառերի, թփերի, սերմերի ձեռքբերում՝ 120 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Հեռագնա արոտավայրերի ստեղծում և նրանց տանող ճանապարհների կառուցում՝200 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Անասնահամալիրի մեծացման, պահեստային ենթակառուցվածքների կառուցման աշխատանքներ՝ 200 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | • Անասնապահության, հողագործության, այգեգործության թեմաներով ուսուցման կազմակերպման աշխատանքներ՝ 240 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Անասնահամալիրի և գյուղացիական բնակչության օգտագործման համար վերականգնվող էներգիայի սարքավորումների ձեռքբերում և շահագործման ծախսեր՝ 160 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Գրասենյակային և տրանսպորտային ծախսեր՝ 225 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Աուդիտորական ծախսեր՝ 40 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Կոմունալ վճարումներ՝ 62 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Տարածքի վարձակալություն՝ 60 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Չնախատեսված ծախսեր՝ 60 000եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | • Աշխատավարձ՝ 483 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Աուդիտորական ծախսեր՝ 40 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:<br>• Տարածքի վարձակալություն՝ 60 000 եվրոյին համարժեք ՀՀ դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, Տեղական Ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Տավուշի մարզպետարան |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվում է Հիմնադրի և միջազգային աուդիտի կողմից և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից |

«ՀիմնաՏավուշ» Զարգացման Հիմնադրամի

գործադիր տնօրեն՝ Ս[illegible]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**26 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1265- Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 20ի N 01.1/80-2/28307-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 06/3-8/39390-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ռուսաստանի դաշնությունից «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված TOYOTA RAV4 մակնիշի մարդատար ավտոմեքենան (2016 թվականի արտադրության, նույնականացման համարը JTMBDREV10J026302, 1,530,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 55,000 ռուսական ռուբլի, ԵՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1266 -Ա**
**քաղ. Երևան**

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՐԹԱՎՃԱՐՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N 01.1/80-2/28545-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/16013-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11548-16, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 03/07-1/15532-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 06/3-8/37633-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 133,200,000 դրամ արժողությամբ «Կրթավճարներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի նոյեմբերի 1-ին կնքված՝ N 177/01/11/2012 պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հարավ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 18-ին կնքված՝ N 230174 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Փրայսուոթերհաուսկուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2016 թվականի մարտի 1-ին կնքված՝ N FAAS/03/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 5,892,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Աէոա Կանց» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01544734) 2016 թվականի նոյեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գրենական պիտույքների և պարագաների մատակարարում՝ 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյան ______________ կողմից

«12» դեկտեմբերի 2016 թ

## Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Կրթավճարների
## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել հանրապետության պետական և մասնավոր բարձրագույն հաստատություններում, քոլեջներում ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությունների գծով ուսուցանվող, սոցիալապես անապահով և անվճարունակ ուսանողներին՝ կրթավճար և կրթաթոշակ տրամադրելու միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Անուշ Մաքևոսյան, Ժիրայր Նիշանյան, Հարոլդ Գուլամիրյան, Մարգարիտ Անենյան, Էդուարդ Մարդիգյան, Ավեդիս և Արշո Բաղսարյան, Թոմաս և Դորա Գարաբեդյան, Անդրանիկ և Բեթթի Բերբերյան, Հարրի և Սյուզան Թուֆայան |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և ք. Երևան:<br>Բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 133 200 000 ՀՀ դրամ<br>Տարեկան ուսման վարձը կազմում է 100 850 000 ՀՀ դրամ:<br>Տարեկան կրթաթոշակը 16 120 000 ՀՀ դրամ:<br>Կազմակերպական ծախսեր 16 230 000 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | 1. Երևանի առաջնակարգ ԲՈՒՀ-երի բակալավրիատում, մագիստրատուրայում և կլինիկական օրդինատուրայում սովորող 390 ուսանող:<br><br>2. Ծագումով Գեղարքունիքի մարզից 84 ուսանող, որ սովորում են Գավառի պետական համալսարանում և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում:<br><br>3. ք. Երևանի, ք. Վանաձորի և ք. Գավառի մանկատների կողմից երաշխավորված, ուսումը շարունակելու ցանկություն հայտնած մանկատների 26 ներկա և նախկին սաներ: |



| | | |
|---|---|---|
| | | 4. Տավուշի մարզի բարձրագույն, արհեստագործական, միջնակարգ մասնագիտական կրթություն ստացող թվով 39 ուսանողներ:<br><br>Ընդհանուրը՝ 539 ուսանող |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2017 – 31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Կրթավճարների տրամադրման մրցույթների մասին հայտարարությունների տարածում ԶԼՄ-ների միջոցով /թերթեր, ռադիո, հեռուստակայաններ/: (մայիս - հունիս 2017)<br>2. Մրցույթների մասին հայտարարությունների տարածում վերոնշյալ բուհերում՝ հայտարարությունները փակցնելու միջոցով: (ընդունող հանձնաժողովների 2017 թ. աշխատանքի մեկնարկին)<br>3. Փաստաթղթային փաթեթների անհրաժեշտ քանակի պատճենահանում, տարածում բուհերում, այլ կրթօջախներում: (մայիս-հուլիս 2017)<br>4. Դիմորդների կողմից լրացված փաթեթների հավաքում: (օգոստոս 2017)<br>5. Փաթեթների դիտարկում, նախնական ընտրություն: (օգոստոս 2017)<br>6. Բոլոր դիմորդների տնայցեր: (օգոստոս 2017)<br>7. Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում մանկատներում: ՀՕՖ-ի կրթական ծրագրերի համակարգող խորհրդի նիստի աշխատանքների կազմակերպում՝ վերջնական ընտրություն կատարելու նպատակով: օգոստոս-սեպտեմբեր 2017<br>8. Հաղթողների ընտրություն: սեպտեմբեր 2017<br>9. Մրցույթների արդյունքների մասին տեղեկացում – հաղթողների ցուցակները փակցվում են ՀՕՖ-ում:(սեպտեմբեր 2017)<br>10. Կողմնորոշման հանդիպումներ մրցույթներում հաղթող ճանաչված ուսանողների հետ, պայմանագրերի ստորագրում:(ուս տարվա ընթացքում)<br>11. Կրթավճարների փոխանցում համապատասխան բուհեր /տարեկան երկու անգամ/: (յուրաքանչյուր կիսամյակի սկզբին) Տարեկան ուսման վարձը կազմում է 100 850 000 ՀՀ դրամ:<br>12. Ամենամսյա կրթաթոշակների վճարում ուսանողներին: (յուրաքաչյուր ամիս) Տարեկան կրթաթոշակը 16 120 000 ՀՀ դրամ:<br>13. Բուհերի հետ մշտական կապի պահպանում՝ ուսանողների ակադեմիական առաջադիմությանը հետևելու նպատակով: (ուս. տարվա ողջ ընթացքում)<br>14. Ամեն կիսամյակի ավարտից հետո ստուգման գրքույկների պատճենների հավաքում և դիտարկում: (յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո)<br>15. Առաջադիմության արդյունքները ուսումնասիրելու նպատակով Կրթական ծրագրեի համակարգող խորհրդի նիստերի գումարում:(յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո)<br>16. Ուսանողների մասնակցությամբ բարեգործական միջոցառումների |

| | | |
|---|---|---|
| | | կազմակերպում: (ուս տարվա ընթացքում)<br>17. Ծրագրի բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ այլ միջոցառումների կազմակերպում կամ քայլերի ձեռնարկում: (ուս տարվա ընթացքում)<br>Կրթավճարները տրամադրվում են մրցութային կարգով՝մասնակցության և ընտրության երկու հիմնական չափանիշների հիման վրա՝ դիմորդի ընտանիքի աղքատության ցուցանիշը և դիմորդի ակադեմիական առաջընթացը: Կրթավճարները տրամադրվում են բակալավրիատում կամ այլ կրթական հաստատությունում ուսումնառության ողջ ընթացքում: Ծրագրին մասնակցությունը կասեցվում է, եթե տարիների ընթացքում փոփոխվել է ընտանիքի սոցիալական վիճակը կամ ուսանողը թերանում է ուսման մեջ և չի կատարում իր պարտավորությունները: Նման դեպքերում ոչ բավարար առաջադիմություն ունեցող ուսանողի փոխարեն ընտրվում է նորը՝ ելնելով վերոնշյալ չափանիշներից: Յուրաքանչյուր ամիս 7000-ական դրամ կրթաթոշակ է տրամադրվում ծրագրերում ընդգրկված մանկատան սան կամ շրջանավարտ ուսանողներին, Գավառի պետական համալսարանում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում սովորող ուսանողներին՝ բարերարների ցանկությամբ: Գումարը նախատեսված է ուսումնական նյութերի պարճենահանման, գրենական պիտույքների և դասագրքերի ձեռքբերման կամ տրանսպորտային ծախսերը հոգալու համար:<br><br>Դիմորդների և ուսանողների ընտանիքների սոցիալական վիճակի մասին տեղեկությունները հավաքագրվում են համապատասխան հարցաթերթիկի միջոցով և այնուհետև ճշտվում նրանցից յուրաքնաչյուր բնակարան այցելության ընթացքում: Մրցույթի արդյունքները ամփոփվում են կրթական ծրագրերի հանձնաժողովի նիստերի ընթացքում: Հանձնաժողովի անդամներ են ՀՕՖ աշխատակիցները, ծրագրերի համակարգողները,բարերարների ներկայացուցիչները և ՀՕՖ կրթական ծրագրերի շահառուները՝կրթաթոշակառուները:<br><br>Տարեկան ուսման վարձը կազմում է 100 850 000 ՀՀ դրամ:<br>Տարեկան կրթաթոշակը 16 120 000 ՀՀ դրամ:<br>Կազմակերպական ծախսեր 16 230 000 ՀՀ դրամ<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքն է 133 200 000 ՀՀ դրամ |
| 10. | Ձեր բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության և հեռախոսային ծառայությունների համար 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 3 000 000 դրամի չափով՝ պայմանագիր 177/01/11/2012 կնքված 01.11.2012թ. «Յուքոմ» ՍՊԸ-ի, (ք. Երևան, Տերյան 19, բն. 4, ՀՎՀՀ 0024873) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |



| | | |
|---|---|---|
| | | Ակնկալում ենք օգտագործված էլեկտրաէներգիայի դիմաց 01.01.2016 - 31.12.2016 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 000 000 դրամի չափով՝ պայմանագիր 230174, կնքված 18.03.08թ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» Փ.Բ.Ը.Հարավ մասնաճյուղի (ք. Երևան, Արշակունյաց 17ա, ՀՎՀՀ 01520882) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք հաշվապահական ծառայությունների համար 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 5 892 000 դրամի չափով՝ հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման նամակ-համաձայնագիր N FAAS/03/16, կնքված 01.03.2016թ. «Փրայսուոթերհաուսկուպերս Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, ՆՈՐԴ բիզնես կենտրոն, 6-րդ հարկ, թիվ 17 գրասենյակ, ՀՎՀՀ 02588296) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք գրասենյակային պարագաների ձեռքբերման դիմաց 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 1 200 000 դրամի չափով՝ գրասենյակային պարագաների ձեռքբերման պայմանագիր կնքված 14.11.2016թ. կնքված «Աէռա Կանց» ՍՊԸ ընկերության (ՀՀ, ք. Երևան, Կորյունի 8, ՀՎՀՀ 01544734) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 16 230 000 ՀՀ դրամ, որն կազմում է ծրագրի ընդհանուր արժողության 12.18 %-ը:<br>Ծրագրի սպասարկումը ներառում է՝<br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 738 000<br>կապի ծառայություններ 3 000 000<br>կոմունալ ծախսեր 2 000 000<br>տրանսպորտային ծախսեր 1 000 000<br>հաշվապահական ծառայություններ 5 892 000<br>տպագրական ծախսեր 400 000<br>գրասենյակային պարագաներ 1 200 000 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի<br>2. ՀՀ Կրթության և գիտության , ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների<br>3. Բոլոր վերը նշված կրթօջախների<br>4. Մանկատների<br>5. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի |

| | | |
|---|---|---|
| | | 6. ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության զբաղվածության կենտրոնի երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի<br>7. Տեղական ինքնակառավարման մարմինների<br>8. Վերոնշյալ ոլորտում գործող այլ տեղական և արտասահմանյան ոչ կառավարական կառույցների |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ծրագրի հովանավորների՝ Անուշ Մաթևոսյանի, Ժիրայր Նիշանյանի, Մարգարիտ Անենյանի, Էդուարդ Մարդիգյանի, Գուլամերյան ընտանիքի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1267 -Ա**
**քաղ. Երևան**

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 01.1/80-2/26966-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/16011-16, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 03/07-1/15593-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտներ կոմիտեի դեկտեմբերի 2-ի N 06/3-8/37162-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 80,008,000 դրամ արժողությամբ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 015.08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 2,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2006 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N 07-0125-22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված՝ N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 48,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի կողմից
«29» նոյեմբերի 2016թ

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ)

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում ՀՀ գիտնականներին և գիտական խմբերին |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայաստանի երիտասարդական հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներ, ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության տակ գործող, ՀՀ Կառավարությանն առընթեր և այլ գերատեսչական պատկանելիություն ունեցող գիտական և կրթական հիմնարկներ:<br>Բնագավառը՝ գիտություն և կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 80,008,000 ՀՀ դրամ:<br>Այդ թվում դրամաշնորհի գումար՝ 74 400 000 ՀՀ դրամ:<br>Կազմակեպական ծախսեր՝ 5 608 000 ՀՀ դրամ:<br><br>Մեկ դրամաշնորհի գումարը կազմում է 5 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>Միջոցները ստացվելու են ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ գիտական և կրթական հիմնարկներ, գիտնականներ:<br>Ընդամենը 31 գիտական խմբեր,<br>Ընդհանուրը՝ 125 գիտնականներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2017 – 30.01.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի կողմից ՀՀ թերթերում տպագրված հայտարարության հիման վրա մրցույթի կազմակերպում: Մրցույթի հայտարարումից հետո մասնակիցները էլ. փոստով, անգլերեն լեզվով գրված իրենց աշխատանքները ուղարկում են Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի անցկացման կազմ. կոմիտեին (Հետազոտական խորհրդին), որը համապատասխան մասնագիտությունների |



| | | |
|---|---|---|
| | | առաջատար գիտնականներին է ներկայացնում առաջադրված աշխատանքները: Համադրելով տարբեր գիտնականների եզրակացությունները գիտական խմբերի աշխատանքների վերաբերյալ՝ հայտարարվում են մրցույթի հաղթողները: Դրամաշնորհի հաղթողները ճանաչվելուց հետո ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղը պայմանագրեր է կնքում նրանց հետ և վերահսկում պայմանների կատարումը:Գիտական ծրագրերի իրականացման ժամանակ՝ ՀՕՖ-ի մոնիթորինգի հանձնաժողովը տարին 2 անգամ այցեր է կատարում գիտական խմբեր ընթացքին ծանոթանալու նպատակով:<br><br>Ծրագրի 1-ին փուլ.01.01.2017թ. – 01.07.2017թ.<br>Ծրագրի 2-րդ փուլ. 01.07.2017թ. – 30.01.2018թ.<br><br>Դրամաշնորհի առաջին կեսը տրվում է հունվար 2017թ. գումարի երկրորդ կեսը՝ առաջին փուլի ավարտին /հուլիս, 2017թ. / :<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 80,008,000 ՀՀ դրամ, որից 74 400 000 ՀՀ դրամ գումարը տրամադրվում է 31 գիտական խմբերին, որպես դրամաշնորհ, յուրաքանչյուրին՝ 2 400 000 ՀՀ դրամ, իսկ 5 608 000 ՀՀ դրամ գումարը հանդիսանում է կազմակերպական ծախս, որն ներառում է.<br><br>Ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 160 000<br>Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48 000<br>Կոմունալ ծախսեր 2 900 000<br>Տպագրական ծախսեր 500 000 |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք օգտագործված գազի դիմաց 01.01.2017 - 31.12.2017թ թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 200 000 դրամի չափով՝<br>պայմանագիր N 015 08.13.1511, կնքված 07.07.2013 թ «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի (Երևանի ԳԳՄ, ՀՀ, ք, Երևան, Չարենցի 141ա, ՀՎՀՀ 00046317), պետական գրանցման վկայականի ներդիր 020-ով վերանվանվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք օգտագործված ջրի դիմաց 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 700 000 դրամի չափով՝<br>պայմանագիր N 07-0125-22, կնքված 01.06.06 «Երևան Ջուր» ՓԲԸ-ի (Երևան 0025, Աբովյան 66ա, ՀՎՀՀ01555351) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների համար 01.01.2017 - |

| | | |
|---|---|---|
| | | 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 48 000 դրամի չափով՝ պայմանագիր N 010957156 կնքված 28.11.06թ «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի (ք. Երևան, Ահարոնյան 2, ՀՎՀՀ 02500052) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է այդ թվում 5 608 000 ՀՀ դրամ, ընդհանուր արժողության 7 %: Ծրագրի սպասարկումը ներառում է.<br><br>Ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 160 000<br>Ֆիքսված հեռախոսակապի ծառայություն 48 000<br>Կոմունալ ծախսեր 2 900 000<br>Տպագրական ծախսեր 500 000 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ ԳԱԱ, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, իսկ եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1268 -Ա**
**քաղ. Երևան**

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N 01.1/80-2/26986-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N 02/14/16030-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկեմբերի 1-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11495-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դեկտեմբերի 2-ի N 06/3-8/37163-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 117,682,000 դրամ արժողությամբ «Բարեգործական ճաշարաններ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեդտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01502333) 2008 թվականի նոյեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը (2016 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 7 համաձայնագրի խմբագրությամբ), որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վարձակալության ծառայությունների մատուցում՝ 3,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված՝ N 2939 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի _______ կողմից
«29» նոյեմբերի 2016թ

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող *Բարեգործական ճաշարաններ*

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Բարեգործական ճաշարաններ» ծրագրի նպատակն է նպաստել սոցիալական լարվածության մեղմացմանը մայրաքաղաքում և հանրապետության այլ քաղաքներում՝ Գյումրի, Բերդ, Բյուրեղավան, Նոր Հաճըն, սոցիալապես անապահով խավերին /միայնակ տարեցներ, հաշմանդամներ, գործազուրկներ/ ամենօրյա կալորիական տաք կերակուրով ապահովելու միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՕՖ-ի կողմից իրականացվող «Բարեգործական ճաշարաններ» բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող սննդամթերքի, լվացքի և հիգիենիկ պարագաների գնում, կապ, կոմունալ կենցաղային, տարածքի և պահեստի վարձակալության համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 01.01.2017 թվականից մինչև 31.12.2017 թվականը: |
| 3. | Բարեգործը | Հայ օգնության ֆոնդ, ԱՄՆ-ի Սան-Ֆրանցիսկոյի «Հայաստանի բարեկամներ» կազմակերպություն, Նիշան Աթինիզյան |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ք. Երևան, ք. Բերդ, ք. Գյումրի, ք. Նոր Հաճըն, ք. Բյուրեղավան:<br>Բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 117 682 000.00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ք. Երևանի Նոր Նորք համայնքի բարեգործական ճաշարան՝ 180 շահառու, ք. Բերդի բարեգործական ճաշարան՝ 120 շահառու, ք. Գյումրիի բարեգործական ճաշարան՝ 200 շահառու, ք. Նոր Հաճընի բարեգործական ճաշարան՝ 180 շահառու, ք. Բյուրեղավանի բարեգործական ճաշարան՝ 120 շահառու, բարեգործական ճաշարաններ այցելող 800 կարիքավորներ և ծերեր, որոնք ընտրվում են տեղական սոցիալական ծառայությունների հետ համագործակցելով: |



| | | |
|---|---|---|
| | | Գյումրի բարեգործական ճաշարանում բարեգործի ցանկությամբ տրվում է նաև հագուստ և հիգենիայի պարագաներ:<br>Ծրագիրն ամբողջությամբ իրականացվում է անվճար: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և/կամ սկիզբը, ավարտը | 01.01.2017 – 31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տեղական սոցիալական ծառայությունների հետ համաձայնեցված ցուցակներով՝ 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, շաբաթական 5 օր, օրական 1 անգամ տաք կերակուրի մատուցում կարիքավորներին և ծերերին: Ծրագիրը իրականացվելու է տեղական սոց. ծառայությունների հետ կազմված ցուցակներով |

| Անվանում | [illegible] | [illegible] | 1 եռամսյակ | 2 եռամսյակ | 3 եռամսյակ | 4 եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|
| Ք.Երևան (Նոր Նորք համայնք) | 180 | | | | | |
| *սնունդ և հիգենիկ պարագաներ* | | *18,776,000.00* | *4,694,000.00* | *4,694,000.00* | *4,694,000.00* | *4,694,000.00* |
| *էլեկտրաէներգիա* | | *984,000.00* | *246,000.00* | *246,000.00* | *246,000.00* | *246,000.00* |
| *աշխատավարձ բ/ճ. անձնակազմի* | | *3,464,000.00* | *866,000.00* | *866,000.00* | *866,000.00* | *866,000.00* |
| **Ընդամենը** | | ***23,224,000.00*** | ***5,806,000.00*** | ***5,806,000.00*** | ***5,806,000.00*** | ***5,806,000.00*** |
| Ք.Բերդ | 120 | | | | | |
| *սնունդ և հիգենիկ պարագաներ* | | *12,516,000.00* | *3,129,000.00* | *3,129,000.00* | *3,129,000.00* | *3,129,000.00* |
| *էլեկտրաէներգիա* | | *550,000.00* | *137,500.00* | *137,500.00* | *137,500.00* | *137,500.00* |
| *աշխատավարձ բ/ճ. անձնակազմի* | | *3,900,000.00* | *975,000.00* | *975,000.00* | *975,000.00* | *975,000.00* |
| **Ընդամենը** | | ***16,966,000.00*** | ***4,241,500.00*** | ***4,241,500.00*** | ***4,241,500.00*** | ***4,241,500.00*** |
| Ք.Գյումրի | 200 | | | | | |
| *սնունդ և հիգենիկ պարագաներ* | | *17,500,000.00* | *4,978,500.00* | *4,978,500.00* | *4,978,500.00* | *4,978,500.00* |
| *Շահառուներին բաղնիքի սպասարկում* | | *2,850,000.00* | *712,500.00* | *712,500.00* | *712,500.00* | *712,500.00* |
| *էլեկտրաէներգիա, ջուր* | | *1,424,000.00* | *356,000.00* | *356,000.00* | *356,000.00* | *356,000.00* |
| *վարձավճար* | | *2,160,000.00* | *540,000.00* | *540,000.00* | *540,000.00* | *540,000.00* |
| *աշխատավարձ բ/ճ. անձնակազմի* | | *5,128,000.00* | *1,282,000.00* | *1,282,000.00* | *1,282,000.00* | *1,282,000.00* |
| **Ընդամենը** | | ***29,062,000.00*** | ***7,869,000.00*** | ***7,869,000.00*** | ***7,869,000.00*** | ***7,869,000.00*** |
| Ք.Բյուրեղավան | 120 | | | | | |
| *սնունդ և հիգենիկ* | | *12,516,000.00* | *3,129,000.00* | *3,129,000.00* | *3,129,000.00* | *3,129,000.00* |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| պարագաներ | | | | | | |
| էլեկտրաէներգիա | | 920,000.00 | 230,000.00 | 230,000.00 | 230,000.00 | 230,000.00 |
| աշխատավարձ բ/ճ. անձնակազմի | | 2,624,000.00 | 656,000.00 | 656,000.00 | 656,000.00 | 656,000.00 |
| Ընդամենը | | 16,060,000.00 | 4,015,000.00 | 4,015,000.00 | 4,015,000.00 | 4,015,000.00 |
| [illegible] | 180 | | | | | |
| սնունդ և հիգիենիկ պարագաներ | | 18,776,000.00 | 4,694,000.00 | 4,694,000.00 | 4,694,000.00 | 4,694,000.00 |
| էլեկտրաէներգիա | | 920,000.00 | 230,000.00 | 230,000.00 | 230,000.00 | 230,000.00 |
| աշխատավարձ բ/ճ. անձնակազմի | | 2,624,000.00 | 656,000.00 | 656,000.00 | 656,000.00 | 656,000.00 |
| Ընդամենը | | 22,320,000.00 | 5,580,000.00 | 5,580,000.00 | 5,580,000.00 | 5,580,000.00 |
| Պահեստի վարձակալություն | | 3 650 000.00 | 900 000.00 | 910 000.00 | 920 000.00 | 920 000.00 |
| Ընդհանուր | 800 | 111,282,000.00 | 27,808,000.00 | 27,818,000.00 | 27,828,000.00 | 27,828,000.00 |
| Կազմակերպչական ծախսեր | | | | | | |
| աշխատավարձ | | 3 600 000.00 | 900 000.00 | 900 000.00 | 900 000.00 | 900 000.00 |
| տրանսպորտ | | 800 000.00 | 200 000.00 | 200 000.00 | 200 000.00 | 200 000.00 |
| Կապ և հեռահաղորդակցություն | | 2 000 000.00 | 500 000.00 | 500 000.00 | 500 000.00 | 500 000.00 |
| Ընդամենը | | 6 400 000.00 | 1 600 000.00 | 1 600 000.00 | 1 600 000.00 | 1 600 000.00 |
| Ընդամենը ծրագրային ծախսեր | | 117,682,000.00 | 29,408,000.00 | 29,418,000.00 | 29,428,000.00 | 29,428,000.00 |
| | | | | | | |
| [illegible] | | | | | | |

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 117 682 000.00 ՀՀ դրամ:
Շահառուների ընդհանուր թիվը՝ 800 մարդ

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվելիք ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | - սնունդ և հիգիենիկ պարագաների ձեռքբերում՝ 80 084 000 ՀՀ դրամ<br>- էլեկտրաէներգիա՝ 4 098 000 ՀՀ դրամ<br>- ջուր՝ 700 000 ՀՀ դրամ<br>- բաղնիքի ծառայություն շահառուների համար՝ 2 850 000 ՀՀ դրամ<br>- տարածքի վարձակալություն՝ 2 160 000 ՀՀ դրամ<br>- տրանսպորտային ծառայություններ՝ 800 000 ՀՀ դրամ<br><br>- ակնկալում ենք պահեստի վարձակալության համար 01.01.2017-31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 3 650 000 ՀՀ դրամի չափով: Պայմանագիր կնքված 26.11.2008թ «Մեդտեխնիկա պլյուս» ՓԲԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Մ. Հերացու 7, ՀՎՀՀ |



| | | |
|---|---|---|
| | | 01502333) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>- ակնկալում ենք բջջային հեռախոսակապի ծառայությունների համար 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 000 000 դրամի չափով՝պայմանագիր N 2939 կնքված 28.11.06թ «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ի (ք. Երևան, Աևարոնյան 2, ՀՎՀՀ 02500052) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 6 400 000 ՀՀ դրամ, որն ընդհանուր ծրագրի 5.43 % է: Ծրագրի սպասարկումը ներառում է ճաշարանների աշխատանքների վերահսկողություն ՀՕՖ-ի աշխատակիցների կողմից, տրանսպորտային ծախսեր, հանդիպումներ տեղ. ինքնակառավարման մարմինների հետ, գրասենյակային ծախսեր: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Իրականացման ընթացքում կազմակերպությունն համագործակցում է՝ ՀՀ Աշխատանքի և սոցապ. նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի կողմից: Եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ Armenian Relief of America Fund Armenian Branch ՀՎՀՀ*02517115*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**23 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1269 -Ա**

**քաղ. Երևան**

# ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՋԱՎԱԽՔԻ ՀԱՅՐԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 01.1/80-2/27147-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 6-ի N 02/14/16172-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11488-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտներ կոմիտեի դեկտեմբերի 6-ի N 06/3-8/37591-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 95,662,000 դրամ արժողությամբ «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2013 թվականի հունիսի 18-ին կնքված՝ N ID 1604 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2016 թվականի նոյեմբերի 14-ին կնքված՝ N 132/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաաճյուղին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Մարգսյանի ______ կողմից

«29» նոյեմբերի 2016թ

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին»

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը:<br><br>Ներկայումս ծրագրում ընդգրկված են 947 երեխաներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միություն, ամերիկահայ ընտանիքներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Ջավախք:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 95 662 000 ՀՀ դրամ: Որից՝<br><br>դրամական օգնություն 90 912 000 ՀՀ դրամ,<br>կազմակերպական ծախսեր 4 750 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի մարզերում և Ջավախքում բնակվող 947 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ՝<br>Սյունիքի մարզից 209,<br>Շիրակի մարզից 67,<br>Տավուշի մարզից 48,<br>Արարատի մարզից 380,<br>Արմավիրի մարզից 30, |



| | | |
|---|---|---|
| | | Արագածոտնի մարզից 50,<br>Կոտայքի մարզից 62,<br>Գեղարքունիքի մարզից 33,<br>Ջավախքից 68 երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2017 – 31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դրամական օգնության տրամադրում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ 100 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ:<br>Ընդհանուր գումարը՝ 90 912 000 ՀՀ դրամ:<br><br>2. Հայ Առաքելական եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում:<br><br>Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա:<br><br>Կազմակերպական ծախսեր՝ 4 750 000 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 95 662 000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 250 000 դրամի չափով՝ պայմանագիր N ID 1604 կնքված 18.06.2013թ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի (ք. Երևան 0012, Հրաչյա Քոչար 13/1, ՀՎՀՀ 00930093) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ավտոմեքենայի վառելիքի ձեռք բերման համար 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 500 000 դրամի չափով՝ պայմանագիր 132/16, կնքված 14.11.16թ «Ֆլեշ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Կողբացու 30, ՀՎՀՀ 01808789) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 4 750 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 5 %-ը:<br>Ծրագրի սպասարկումը ներառում է<br><br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 000 000 ՀՀ դրամ<br>կապի ծառայություն 250 000 ՀՀ դրամ<br>տնայցերի հետ կապված ծախսեր 2 500 000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության,<br>3. Տեղական ինքնակառավարման մարմինների<br>4. Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Վիրահայոց թեմերի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**26 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1270 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)
**քաղ. Երևան**

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՏՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 01.1/80-2/28624-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 02/14/16477-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11904-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 06/3-8/38208-16 ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 101/104.3.2/5950-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 81,546,500 դրամ արժողությամբ ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ՝ 06940684)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ -ի «Դեբեդ» մասնաճյուղի հետ (քաղ. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի մարտի 19-ին կնքված՝ N 4100004130122004271 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 3,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ -ի Լոռու կենտրոնի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի մարտի 14-ին կնքված՝ N 510100708 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սպարապետ» ՍՊԸ -ի հետ (քաղ. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ՝ 06915002) 2015 թվականի նոյեմբերի 23-ին կնքված՝ N 15-01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը սննդամթերքի և տնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 17,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ -ի Լոռու ԳԳՄ-ի հետ (քաղ. Վանաձոր, Զուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N 03108134348 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 4,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Էյ Ի Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2016 թվականի նոյեմբերի 2-ին կնքված՝ N 4-59 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 99,778 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00419022) 2016 թվականի նոյեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև ապրիլի 15-ը աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 330,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի**

**տնօրեն Մ. Օհանյան-Խաչիկյան**

**«01» դեկտեմբեր 2016թ.**

Ամերիկայի Հայ Օգնության ֆոնդի **«Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի** կողմից 2017թ-ին իրականացվող

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վանաձորի տարեցների տան խնամքի տակ գտնվող միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամքի կազմակերպում, նրանց սոցիալական պահանջմունքների բավարարում, բժշկական, հոգեբանական օգնության ցուցաբերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղման նպատակը | Ակնկալում ենք սննդամթերքի, տնտեսական ապրանքների արժեքի, հեռախոսակապի, սպառած գազի, գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, էլեկտրաէներգիայի և տարեկան աուդիտի գծով մատուցված ծառայությունների դիմաց ԱԱՀ-ից ազատում 01.01.2017թ.-31.12.2017թ. ընթացքում: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), ամերիկահայ բարերարներ՝ Գևորգ և Սիրվարդ Գարամանուկներ, Շահան Արծրունի |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամ, հասցե՝ ք. Վանաձոր, Մայմեխի 8 , ՀՎՀՀ՝ 06940684 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Մայմեխի 8: Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **81 546 500** ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վանաձորի տարեցների տանը մշտապես բնակվող 55 սոցիալապես անապահով ծերեր: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2017թ – 31.12.2017թ, ծրագիրը շարունակական է: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հիմնադրամի խնամքի տակ գտնվող սոցիալապես անապահով տարեցների շուրջօրյա խնամքի կազմակերպում, դրա իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում, տարեցների սոցիալական պահանջմունքների բավարարում, բազմատեսակ հետաքրքիր և մշակութային միջոցառումների իրականացում նրանց առօրյան հետաքրքիր դարձնելու համար, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում ողջ 2017թ տարվա ընթացքում, որը ներառում է նրանց խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը, այդ թվում<br>1. Տարեցների տանը բնակվող ծերերի համար նպաստավոր պայմանների ստեղծում՝ |

2

| | | |
|---|---|---|
| | | • Կոմունալ և կապի ծառայության ծախսեր՝ - 8 567 750 ՀՀ դրամ<br>• Շենքի շահագործման և պահպանման ծախսեր՝ - 702 000 ՀՀ դրամ<br>2. Տարեցների խնամքի, հիգենայի կազմակերպում, սոցիալական պահանջմունքների բավարարում, մշակութային միջոցառումների կազմակերպում, հոգեբանական և իրավաբանական օգնության տրամադրում<br>• Սննդի, տնտեսական ապրանքների ձեռք բերում - 18 337 500 ՀՀ դրամ<br>• Հագուստի, անկողնային և այլ անհրաժեշտ պարագաների ձեռք բերում - 810 000 ՀՀ դրամ<br>• Տարեցների տունն սպասարկող տրանսպորտային միջոցների շահագործման և սպասարկման ծախսեր - 2 466 000 ՀՀ դրամ<br>• Խնամքի, սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) - 40 971 750 ՀՀ դրամ<br>3. Տարեցների առողջական վիճակի ամբողջական հետազոտությունների կազմակերպում, առաջնային բժշկական օգնության տրամադրում - 600 000 ՀՀ դրամ<br>4. Կազմակերպական ծախսեր - 9 091 500Հ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **Ակնկալում ենք ներքոհիշյալ կազմակերպությունների կողմից մատակարարված ապրանքների և ծառայությունների գծով ԱԱՀ-ից ազատում**<br>1. Օգտագործված գազի դիմաց ԱԱՀ-ից ազատում **4 100 000 ՀՀ** դրամի չափով 01.01.2017թ.-31.12.2017թ. ընթացքում /պայմանագիր N 03108134348, կնքված 01.08.2013թ. **«Հայռուսգազարդ» ՓԲԸ**-ի(Լոռու ԳԳՄ, ք. Վանաձոր, Չուխաջյան 2/2ա, ՀՎՀՀ 00046317) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>2. Գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և կարգաբերման և աշխատանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում **99 778 ՀՀ** դրամի չափով 09.01. 2017թ.-31.12.2017թ. ընթացքում՝ պայմանագիր N 4-59, կնքված 02.11.2016թ **«Էյ-Ի-Ջի-Սերվիս»** ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Արղնցի 10, ՀՎՀՀ 00930884) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>3. Սննդամթերքի և տնտեսական ապրանքների դիմաց ԱԱՀ-ից ազատում **17 000 000** դրամի չափով 01.01.2017թ.-31.12. 2017թ. ընթացքում `պայմանագիր N 16-01, կնքված 15.11.2016թ. **Սպարապետ»** ՍՊԸ-ի(ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 79, ՀՎՀՀ 06915002) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>4. Օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց ԱԱՀ-ից ազատում **3 600 000** դրամի չափով 01.01.2017թ.-31.12.2017թ. ընթացքում՝ պայմանագիր N 4100004130122004271, կնքված 19.03.2008թ. **«Հայաստանի էլեկտրական ցանցեր»** ՓԲԸ-ի Դեբեդ մասնաճյուղի (ՀՀ, ք. Վանաձոր, Բաթումի 8, ՀՎՀՀ 01520882) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք. Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>5. Հեռախոսակապի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում **600 000 ՀՀ** դրամի չափով 01.01.2017թ-31.12.2017թ. ընթացքում՝ պայմանագիր N 510100708, կնքված 14.03.2008թ. **«Արմենտել»** ՓԲԸ-ի Լոռու կենտրոնի (ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 18, ՀՎՀՀ 02500052) և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>6. Աուդիտի ծառայության դիմաց ԱԱՀ-ից ազատում **330 000** ՀՀ դրամի չափով 01.01.2017-15.04.2017թ. ընթացքում՝ պայմանագիր կնքված 15.11.2016թ **«Աուդիտ Սերվիս»** ՍՊԸ–ի ( ՀՀ, Ք.Երևան, Հանրապետության 78/26, ՀՎՀՀ 00419022 ) և Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի (ՀՀ, ք Վանաձոր, Մայմեխի 8, ՀՎՀՀ 06940684) միջև:<br>Կից ներկայացվում են պայմանագրերի լուսապատճենները: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է - **9 091 500 ՀՀ դրամ** , ծրագրի ընդհանուր արժողության **11.1 %**-ը: Ծրագրի սպասարկումը ներառում է ծրագրի ադմինիստրատիվ կազմի աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցները, գործուղման, գրասենյակի համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռք բերման, համակարգչային սպասարկման, բանկային ծառայության և տարեկան աուդիտի անցկացման հետ կապված ծախսերը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, Լոռու մարզպետարան, Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Ամերիկայի ՀՕՖ-ի Նյու Յորքի և Հայաստանյան գրասենյակի, «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի խորհրդի և եռամսյա, տարեկան հաշվետվությունների միջոցով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1271 - Ա**

(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)

**քաղ. Երևան**

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N 01.1/80-2/28773-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 20-ի № 02/14/17096-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/11881-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 06/3-8/38131-16 ու Երևանի քաղաքապետի 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 02/35-833074 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 114,172,738 դրամ արժողությամբ բարեգործական ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից կնքված (քաղ. Երևան, Կ. Ուլնեցու 64, ՀՎՀՀ՝ 01009295)՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի օգոստոսի 6-ին կնքված՝ N 222226 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրական էներգիայի մատակարարում՝ 3,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 013.08.13.0948 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի նոյեմբերի 28-ին կնքված՝ N 010957156 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Թամարա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03500525) 2016 թվականի նոյեմբերի 29-ին կնքված՝ պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Դավիթ 84» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00833046) 2014 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված հացամթերքի մատակարարում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Գրանդ Քենդի» հայ կանադական ՀՁ ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02226764) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2012 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրվող քաղցրավենիքի և հրուշակեղենի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Տեխնոքեմ ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529519) 2010 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում (2015 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի խմբագրությամբ) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը իր կողմից արտադրված կամ գնված ապրանքների մատակարարում՝ 200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02588296) 2016 թվականի մայիսի 1-ին կնքված՝ N FAAS/05/16 պայմանագրում (Հավելված 1 առ 2016 թվականի նոյեմբերի 10-ի) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցում՝ 4,896,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00433357) 2016 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված՝ N 16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ֆինանսական հաշվետվությունների՝ այդ թվում հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, սեփական կապիտալի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունների աուդիտորական ուսումնասիրություն՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Էյ- ի- Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2010 թվականի ապրիլի 9-ին N Ե-1118 պայմանագրում (կից համաձայնագիր N 3/Ե-1118-ում, 10.04.2013 թվականի և համաձայնագիր N 7/Ե-1118-ում, 10.11.2016 թվականի) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում՝ 170,370 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) Հայաստանի Հանրապետության ոստիկանության ՀԿԱ վարչության հետ (ՀՎՀՀ՝ 01533334) 2009 թվականի հունվարի 8-ին կնքված N 01/09 պայմանագրում (կից համաձայնագրեր 01.03.2010 թվականի և 10.11.2016 թվականի) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հայտնաբերել և «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ ներկայացնել մուրացկանությամբ, թափառաշրջիկությամբ զբաղվող և խնամքից զուրկ մնացած անչափահասներին՝ 7,978,368 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Ալեքս Հոլդինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01272278) 2016 թվականի նոյեմբերի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի

հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տրամադրել պահանջված քանակի սննդամթերքի և տնտեսական ապրանքների այն տեսականին, որն առկա է տվյալ պահին վաճառքի համար՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված՝ N 023/27/112012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

15) «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00861057) 2013 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նշված ծառայությունների մատուցում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

16) «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04718853) 2015 թվականի նոյեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը նշված ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

17) «Նոր Սեպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01013499) 2015 թվականի նոյեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տնտեսական ապրանքների և պարագաների մատակարարում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

18) «Լագոոոա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00077712) 2015 թվականի նոյեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մանկական հագուստի, տնտեսական ապրանքների և այլ պարագաների մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամին՝ նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն ................ Մ.Անտոնյան

20 դեկտեմբերի, 2016թ.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվելիք սոցիալական

## Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անմիջական նպատակը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, վարքային և հոգեհուզական խնդիրներով, երեխաների համար «ճգնաժամի միջամտության» ծառայությունների մատուցում երկու ճանապարհով՝<br>1) Ներկենտրոնային - Կենտրոնում այդ երեխաների ժամանակավոր ապաստանում, խնդիրների կարգավորում և վերադարձ ընտանիք և/կամ վերատեղավորում<br>2) Արտակենտրոնային - «Թեժ գիծ» ծառայության կամ ոստիկանության ու այլ մարմինների կողմից ստացված ահազանգերի առնչությամբ սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում դժվար իրավիճակում հայտնված երեխաներին՝ անմիջապես նրանց ընտանիքում՝ կոնկրետ համայնքում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող մասնագիտական ծառայությունների մատուցման, սննդամթերքի, հագուստի, գրենական պիտույքների, սանիտարատեխնիկական պարագաների գնման, ընթացիկ վերանորոգումների, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալում ենք ԱՄՆ-ից ազատում: |
| 3 | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորքի գրասենյակ: |
| 4 | Ծրագրի կատարողը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ,<br>հասցեն՝ ք. Երևան, Կ.Ուլնեցու փողոց, թիվ 64, ՀՎՀՀ 01009295 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ք. Երևան և ՀՀ բոլոր մարզեր<br>Բնագավառը՝ սոցիալական, հոգեբանական և սոցիալ-մանկավարժական աջակցություն |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 114, 172, 738.00 ՀՀ դրամ:<br>Միջոցները ստացվելու են ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ թափառաշրջիկ, աղքատ, անապահով, մուրացիկ, անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող (իրավախախտ, ոստիկանությունում հաշվառված անչափահասներ), վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և աջակցության կարիք ունեն և Կենտրոն |

| | | |
|---|---|---|
| | | են ուղղորդվում ՀՀ Ոստիկանության անչափահասների բաժանմունքի (կնքված պայմանագրի համաձայն), ինչպես նաև Երեխաների պաշտպանության մարզային բաժինների, համայնքային Խնամակալության հանձնաժողովների, կրթական հաստատությունների, պետական և հասարակական այլ տարբեր ատյանների կողմից (ստորագրված համաձայնագրերի համաձայն):<br>Շահառուների թիվը.<br>Ներկենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 250 երեխա և առնվազն 200 ծնող:<br>Արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 1500 երեխա և ավելի քան 1000 ծնող/խնամող:<br>Կենտրոնի ծրագրերում ընդգրկված երեխաները/ընտանիքները կստանան իրենց կարիքներին համապատասխան՝ ԵԱԿՀ-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները:<br>Ակնկալվում է, որ տարվա ընթացքում ծառայություններ կստանան մինչև 3000 շահառուներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողու-թյունը և/ կամ սկիզբը, ավարտը | 01.01.2017թ. - 31.12.2017թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Արագ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ Ապաստանման, Թեժ գիծ, Կանխարգելման, Արտակենտրոնային, Խնամատարության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի ներքո և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են Կենտրոնում և ստանում 24-ժամյա խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական-մանկավարժական, առողջապահական, իրավական ծառայություններ (երեխաների ծննդյան վկայականների, ընտանիքին վերաբերող այլ փաստաթղթերի վերականգնում), իսկ ոչ այնքան վտանգավոր պայմաններում, սակայն դարձյալ բարձր ռիսկի ներքո գտնվողները օգտվում են Կենտրոնի վերոհիշյալ բոլոր ծառայություններից /բացառությամբ՝ ապաստանման/ անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում:<br>Աջակցությունը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմամասնագիտական գնահատում, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում:<br>Ծառայությունները մատուցվելու են երկու մոտեցմամբ՝ Ներկենտրոնային՝ 24-ժամյա ապաստանման և Արտակենտրոնային՝ անմիջապես երեխայի ընտանիքում:<br>Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաները ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (հիգիենա, սնունդ), սոցիալ հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացիոնոր բուժ. հաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշման աջակցություն, թերապևտիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնարարքների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների մոտ: Այս ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը երկու ամիս, սակայն անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահատկություններից և երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի:<br>Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքը սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է, իր կարիքներին համապատասխան, բոլոր վերը հիշատակված ծառայությունները, բացի |
| | | ապաստանումից և խնամքի ծառայություններից: Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կառույցներին և ծառայություններին, որոնք առնչվում են տվյալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի քննարկումներ՝ օգնելու երեխային/ընտանիքին՝ հաղթահարելու ստեղծված ռիսկային իրավիճակը: Սոցիալ-հոգեբանակլան խորհրդատվություն ստանալու համար երեխաները/ծնողները 3-6 ամիս տևողությամբ կապ են պահպանում կենտրոնի հետ՝ հեռախոսային կամ այցելությունների միջոցով:<br>Երեխաները Կենտրոն են ուղղորդվում ՀՀ բոլոր բնակավայրերից, առանց տարածքային սահմանա-փակումների:<br>Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, կրթական, օրվա զբաղմունքի կազմակերպման, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերը :<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը 2017թ. համար կազմելու է 114,172,738.00 ՀՀ դրամ, որը ըստ եռամսյակների բաշխվելու է հետևյալ կերպ. առաջին եռամսյակ՝ 28,543,184.5 ՀՀ դրամ, երկրորդ եռամսյակ՝ 28,543,184.5 ՀՀ դրամ, երրորդ եռամսյակ՝ 28,543,184.5 ՀՀ դրամ և չորրորդ եռամսյակ՝ 28,543,184.5 ՀՀ դրամ:<br><br>Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների.<br><br>1. սննդամթերքի ձեռքբերում 17,188,000.00 ՀՀ դրամ<br>2. բժշկական սպասարկում/դեղորայք/, սանհիգիենիկ պարագաներ, հագուստ 2,700,000.00 ՀՀ դրամ<br>3. կոմունալ և կապի ծախսեր 10,770,370.00 ՀՀ դրամ<br>4. շինությունների սպասարկում 2,200,000.00 ՀՀ դրամ<br>5. հաշվապահական և աուդիտորական ծառայություն 5,396,000.00 ՀՀ դրամ<br>6. շահառուների սպասարկմանն անհրաժեշտ տրանսպորտային ծախսեր ՝ 4,900,000.00 ՀՀ դրամ<br>7. գրասենյակային պարագաներ 900,000.00 ՀՀ դրամ<br>8. սոցիալական և հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձեր) 55,370,000.00 ՀՀ դրամ,<br>9. Վարչական աշխատակազմի ծախսեր՝ 3,100,000.00 ՀՀ դրամ<br>10.Մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման ծախսեր 3,670,000.00 ՀՀ դրամ<br>11. ՀՀ Ոստիկանություն կողմից իրականացվող ծառայություն՝ 7 978 368 ՀՀ դրամ:<br><br>Բոլոր վերոնշյալ ծախսերը կատարվելու են «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի տարբեր ծրագրերում ընդգրկված շահառու երեխաների համար: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք 2017թ. հունվարի 01-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը ԱԱՀ-ից ազատում հետևյալ կազմակերպությունների/ծառայությունների գծով՝<br><br>1. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Հյուսիս» մասնաճյուղ, ք. Երևան, Քոչար 13ա, |

ՀՎՀՀ 01520882, պայմանագիր N 222226, կնքված 06.08.2008թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար - 3 500 000 ՀՀ դրամ

2. «Հայռուսգազարդ» ՓԲԸ, ք.Երևան, Չարենցի 141ա,
ՀՎՀՀ 00046317, 07.07.2013թ կնքված Պայմանագիր N 013.08.13.0948,
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար - 5 000 000 ՀՀ դրամ

3. «Երևան ջուր» ՓԲԸ ք.Երևան, Աբովյան 66ա,
ՀՎՀՀ 01555351, Պայմանագիր՝ կնքված 01.04.2009թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար - 1 000 000 ՀՀ դրամ

4. «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ, ք. երևան, Ահարոնյան 2,
ՀՎՀՀ 02500052, երկկողմանի Պայմանագիր,
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար 300 000 ՀՀ դրամ

5. «Թամարա» ՍՊԸ, ք.Աբովյան, կ ո տ ա յ ք ի 1/94
ՀՎՀՀ 03500525, Պայմանագիր՝ կնքված է 29.11.2016թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար - 1 500 000 ՀՀ դրամ

6. «Դավիթ 84» ՓԲԸ, ք. Երևան, Դրոյի 22/1,
ՀՎՀՀ 00833046, Պայմանագիր՝ կնքված 26.11.2014թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար - 1 800 000 ՀՀ դրամ

7. «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ, ք. Երևան, Մասիսի 31,
ՀՎՀՀ 02226764, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար – 1 500 000 ՀՀ դրամ

8. «Տեխնոքեմ Ինտերնեյշնլ» ՍՊԸ, ք. Երևան, Արշակունյաց 278,
ՀՎՀՀ 01529519, Պայմանագիր՝ կնքված 01.10.2010թ. և Համաձայնագիր՝ 19.11.12թ
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 200 000 ՀՀ դրամ

9. «Փրայսուոթերհաուսկուպերս Արմենիա» ՍՊԸ, ք. Երևան, Յուսիսային պողոտա 1, թիվ 17
ՅՎՅՅ 02588296, Հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման նամակ-համաձայնագիր N FAAS/05/16, կնքված 01.05.2016թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 4 896 000 ՀՀ դրամ

10. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ, ք.Երևան, Նուբարաշեն 10փ., տ.6,

---

ՏԳՀ՝ ք.Երևան, Մյասնիկյան պող. 5/1,
ՀՎՀՀ 00433357, Պայմանագիր N 16, կնքված 03.10.2016թ.,
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 500 000 ՀՀ դրամ

11. «Էյ-Ի-Ջի-Սերվիս», ք.Երևան, Արղնցի-10,
ՀՎՀՀ 00930884, 09.04.2010թ. Պայմանագիր N Ե-1118, Համաձայնագիր N 3/Ե-1118, 10.04.2013թ. և Համաձայնագիր N 7/Ե-1118, 10.11.2016թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 170 370 ՀՀ դրամ

12. ՀՀ Ոստիկանություն, ք.երևան, Նալբանդյան 130, ՀՎՀՀ 01533334,
08.01.09թ. կնքված Պայմանագիր N 01/09 և կից Համաձայնագրեր՝ կնքված 01.03.2010թ. և 10.11.2016թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 7 978 368 ՀՀ դրամ:

13. Ալեքս Հոլդինգ ՍՊԸ, ք.Երևան, Ծերենցի 3, 188,
ՀՎՀՀ 01272278, Պայմանագիր՝ կնքված 30.11.2016թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 5 000 000 ՀՀ դրամ

14. «Յուքոմ» ՍՊԸ, ք.Երևան, Սայաթ-Նովա 40/1,
ՀՎՀՀ 00024873, Պայմանագիր N 023/27/112012՝ կնքված 27.11.2012թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 800 000 ՀՀ դրամ

15. «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ, ք.Երևան, Հանրապետության 62/133,
ՀՎՀՀ 00861057, Պայմանագիր՝ կնքված 10.10.2013թ.
Պայմանագրի գինը 01.01.2017թ.-31.12.2017թ. համար՝ 400 000 ՀՀ դրամ

16. «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ, ք . Երևան, Պռոշյան 11/5, ՀՎՀՀ 04718853,
Պայմանագիր կնքված՝ 02.11.2015թ .
Պայմանագրի գինը՝ 01.01.2017թ .-31.12.2017թ . համար՝ 500 000 Հ Հ դ ր ա մ

17. «Նոր Սեպ» ՍՊԸ, ք . Երևան, Դրոյի 22/4, ՀՎՀՀ 01013499,
Պայմանագիր կնքված 09.11.2015թ .
Պայմանագրի գինը՝ 01.01.2017թ .-31.12.2017թ . համար՝ 500 000 Հ Հ դրամ

18. «Լազոռա» ՍՊԸ, ք . Երևան, Զաքարիա Քանաքեռցու 117-43, ՀՎՀՀ 00077712,
Պայմանագիր՝ կնքված 09.11.2015թ .
Պայմանագրի գինը՝ 01.01.2017թ .-31.12.2017թ . համար՝ 500 000 Հ Հ դ ր ա մ

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 22 366 370.00 ՀՀ դրամ կամ ծրագրի ընդհանուր արժողության 19.59 %-ը: Կազմակերպական ծախսերը ներառում են կոմունալ և կապի ծառայությունների (10,770,370.00 ՀՀ դրամ), շինությունների սպասարկման (2,200,000.00 ՀՀ դրամ), հաշվապահական և աուդիտորական ծառայությունների (5,396,000.00 ՀՀ դրամ), գրասենյակային պիտույքների (900,000.00 ՀՀ դրամ) և վարչական աշխատակազմի աշխատավարձի համար նախատեսված ծախսեր (3,100,000.00 ՀՀ դրամ): |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ Ոստիկանություն, ՀՀ Կրթության և գիտության նախարարությո ւ ն, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, համայնքային խնամակալության հանձնաժողովներ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և այլն: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և Հայաստանի գրասենյակների, «Երեխաների աջակցության կենտրոն» Հիմնադրամի Խորհրդի, ինչպես նաև եռամյա և տարեկան հաշվետվությունների միջոցով՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**28 դեկտեմբերի 2016 թվականի N Մ- 1272 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1183-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռները (97 տեղ, 3,727 կգ ընդհանուր քաշով, 15,668 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,500 ԱՄՆ-ի դոլար և 100 տեղ, 2,927 կգ ընդհանուր քաշով, 22,298 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,925 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-1183-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով 2016 թ. նոյեմբեր ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Տեղ | Քանակը կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ, Ամանորյա տուփերը նախատեսված են շրջանի բոլոր երեխաների համար | Մանկական ծածկոցներ նոր | 2 | 110 | 400 |
| | Փոքր գնդակներ, փուչիկներ | 1 | 47 | 300 |
| | Մանկական դոշլիկներ | 1 | 20 | 500 |
| | Գունավորելու և նկարազարդ գրքեր, նկարչական պարագաներ | 2 | 320 | 800 |
| | Նոր տակաշորեր, ամրակներ, փաքքաշորեր | 2 | 90 | 300 |
| | Սանրեր | 1 | 220 | 1100 |
| | Յուղամատիտներ (տուփ), ջրաներկ | 3 | 190 | 1100 |
| | Տիկնիկներ | 1 | 50 | 250 |
| | Մազակալներ | 1 | 10 | 300 |
| | Մանկական նոր վերնաշապիկ, սվիտր, զգեստ, շապիկ, ներքնաշոր | 1 | 20 | 100 |
| | Գուլպաներ նոր (զույգ) | 5 | 300 | 1500 |
| | Նոր գլխարկներ, շարֆեր | 3 | 180 | 900 |
| | Ձեռնոցներ նոր | 3 | 200 | 900 |
| | Տետրակներ, բլոկնոտներ, գունավոր թուղթ | 3 | 180 | 700 |
| | Մարկերներ (տուփ) | 2 | 200 | 800 |
| | Խաղեր, քարտեր, փազլներ, հաշվիչներ | 1 | 50 | 100 |
| | Հայելիներ, նկարի շրջանակներ | 1 | 150 | 250 |
| | Գրենական պիտ. մատիտ/գունավոր մատիտ (տուփ), գրչատուփ, գրիչ | 2 | 160 | 320 |
| | Ռետիններ, մատիտի սրիչներ | 2 | 30 | 150 |
| | Մանկական կրծիչներ, չխչխկիկներ, ծծակներ | 1 | 40 | 250 |
| | Քանոն, մկրատներ, սոսինձ | 2 | 20 | 100 |
| | Մանկական ըմպանակ | 1 | 50 | 150 |
| | Փափուկ խաղալիքներ, շորից պայուսակ, քսակ մանկական | 5 | 150 | 300 |
| | Ստիկերներ / շերտ | 1 | 2 | 80 |
| | Ատամի խոզանակներ/խոզանակի տուփ/ատամի թել | 2 | 50 | 700 |
| | Կոշտ խաղալիքներ/խաղ. ծղիկներ/մանկ. արև. ակնոց, ցատկապարան, | 1 | 90 | 150 |
| | Սրբիչներ/քիփկներ/անձեռոցիկ (շորից և թղթից), օճառ | 1 | 10 | 50 |
| | Ամանորյա տուփեր (միայն տարաները) | 8 | 474 | 1150 |
| | Կենցաղային պարագաներ: վարագույր, սեղանի ծածկոց | 31 | 270 | 1633 |
| | Խոհանոցային սպասքեղեն | 5 | 26 | 240 |
| | Ասեղնագործության պարագաներ (կտորներ) | 2 | 18 | 95 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2016 թ. դեկտեմբեր ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Տեղ | Քանակը կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ, Ամանորյա տուփերը նախատեսված են շրջանի բոլոր երեխաների համար | Մանկական ծածկոցներ նոր | 1 | 30 | 250 |
| | Փոքր գնդակներ, փուչիկներ | 1 | 10 | 100 |
| | Մանկական դոշլիկներ | 1 | 30 | 600 |
| | Գունավորելու և նկարազարդ գրքեր, նկարչական պարագաներ | 1 | 110 | 1100 |
| | Նոր տակաշորեր, ամրակներ, փաթթաշորեր | 1 | 20 | 50 |
| | Սանրեր | 1 | 100 | 1200 |
| | Յուղամատիտներ (տուփ) | 1 | 110 | 1000 |
| | Տիկնիկներ | 1 | 20 | 300 |
| | Մազակալներ | 1 | 15 | 200 |
| | Մանկական վերնաշապիկ, շապիկ, ներքնաշոր | 1 | 5 | 50 |
| | Գուլպաներ նոր (զույգ) | 1 | 170 | 3500 |
| | Նոր գլխարկներ, շարֆեր | 1 | 100 | 1200 |
| | Ձեռնոցներ նոր | 1 | 70 | 1100 |
| | Տետրակներ, բլոկնոտներ, գունավոր թուղթ | 1 | 110 | 500 |
| | Մարկերներ (տուփ) | 1 | 80 | 1300 |
| | Խաղեր, քարտեր, փազլներ, հաշվիչներ | 1 | 20 | 100 |
| | Հայելիներ, նկարի շրջանակներ | 1 | 50 | 400 |
| | Գրենական պիտույքներ. մատիտներ/գուն. մատիտներ ~~(տուփ), գրչատուփ,~~ գրիչ | 1 | 110 | 450 |
| | Ռետիններ, Մատիտի սրիչներ | 1 | 20 | 200 |
| | Մանկական կրծիչներ, չխչխկիկներ, ծծակներ | 1 | 20 | 200 |
| | Քանոն, մկրատներ, սոսինձ | 1 | 18 | 110 |
| | Մանկական ըմպանակ | 1 | 30 | 230 |
| | Փափուկ խաղալիքներ, շորից պայուսակ, քսակ | 1 | 110 | 400 |
| | Ստիկերներ / շերտ | 1 | 2 | 50 |
| | Ատամի խոզանակներ/խոզանակի տուփ | 1 | 40 | 383 |
| | Կոշտ խաղալիքներ | 1 | 30 | 150 |
| | Սրբիչներ/քիսիկներ/անձեռոցիկ - շորից և թղթից | 1 | 1 | 40 |
| | Ամանորյա տուփեր (միայն տարաները) | 1 | 400 | 1300 |
| | Անկողնային պարագաներ. ծածկոցներ, սպիտակեղեն, վերմակ | 11 | 415 | 1150 |
| | Հագուստ և աքսեսուարներ | 55 | 570 | 3470 |
| | Հիգիենայի պարագաներ | 4 | 6 | 115 |
| | Կարի մեքենա ձեռքի Singer | 1 | 14 | 400 |
| | Սեղան | 1 | 91 | 700 |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

PROJECT AGAPE

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - AF-116G-5340
Բեռնագիր - NALE046838
1 x 40' կոնտեյներներ - EITU1519210
Կապարակնիք - 8845080
Բեռնված 2016 թ. նոյեմբերի 21-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Կոքրֆիլդ Ռիջ Փլեյս 700, Գարներ, 27529, Հյուսիսային Կարոլինա, ԱՄՆ

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Հայաստան Արցախ Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Սուիթ 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ +37493-408-974, +37410-225-229

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| Մանկական ծածկոցներ նոր | 2 | 110 | 400 |
| Փոքր գնդակներ, փուչիկներ | 1 | 47 | 300 |
| Մանկական դոշլիկներ | 1 | 20 | 500 |
| Գունավորելու և նկարազարդ գրքեր, նկարչական պարագաներ | 2 | 320 | 800 |
| Նոր տակաշորեր, ամրակներ, փաթթաշորեր | 2 | 90 | 300 |
| Սանրեր | 1 | 220 | 1100 |
| Յուղամատիտներ (տուփ), ջրաներկ | 3 | 190 | 1100 |
| Տիկնիկներ | 1 | 50 | 250 |
| Մազակալներ | 1 | 10 | 300 |
| Մանկական նոր վերնաշապիկ, սվիտր, զգեստ, շապիկ, ներքնաշոր | 1 | 20 | 100 |
| Գուլպաներ նոր (զույգ) | 5 | 300 | 1500 |
| Նոր գլխարկներ, շարֆեր | 3 | 180 | 900 |
| Ձեռնոցներ նոր | 3 | 200 | 900 |
| Տետրակներ, բլոկնոտներ, գունավոր թուղթ | 3 | 180 | 700 |
| Մարկերներ (տուփ) | 2 | 200 | 800 |
| Խաղեր, քարտեր, փազլներ, հաշվիչներ | 1 | 50 | 100 |
| Հայելիներ, նկարի շրջանակներ | 1 | 150 | 250 |
| Գրենական պիտ. մատիտ/գունավոր մատիտ (տուփ), գրչատուփ, գրիչ | 2 | 160 | 320 |
| Ռետիններ, մատիտի սրիչներ | 2 | 30 | 150 |
| Մանկական կրծիչներ, չխչխկիկներ, ծծակներ | 1 | 40 | 250 |
| Քանոն, մկրատներ, սոսինձ | 2 | 20 | 100 |
| Մանկական ըմպանակ | 1 | 50 | 150 |
| Փափուկ խաղալիքներ, շորից պայուսակ, քսակ մանկական | 5 | 150 | 300 |
| Ստիկերներ / շերտ | 1 | 2 | 80 |
| Ատամի խոզանակներ/խոզանակի տուփ/ատամի թել | 2 | 50 | 700 |
| Կոշտ խաղալիքներ/խաղ. ծվիկներ/մանկ. արև. ակնոց, ցատկապարան, ավտոմեքենա, մանկական զարդեր | 1 | 90 | 150 |
| Սրբիչներ/քիսիկներ/անձեռոցիկ (շորից և թղթից), օճառ | 1 | 10 | 50 |
| Ամանորյա տուփեր (միայն տարաները) | 8 | 474 | 1150 |
| Կենցաղային պարագաներ: վարագույր, սեղանի ծածկոց | 31 | 270 | 1633 |
| Խոհանոցային սպասքեղեն | 5 | 26 | 240 |
| Ասեղնագործության պարագաներ (կտորներ) | 2 | 18 | 95 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 97 | 3,727.0 | 15,668.00 |

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - AF-126G-5458
Բեռնագիր - NAM2589968
1 x 20' կոնտեյներներ - CMAU0724232
Կապարակնիք - B5018910
Բեռնված 2016 թ. դեկտեմբերի 13-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Վոթֆիլդ Ռիջ Փլեյս 700, Գարներ, 27529, Հյուսիսային Կարոլինա, ԱՄՆ

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Հայաստան Արցախ Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Սուիթ 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ +37493-408-974, +37410-225-229

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՏԵՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| մանկական ծածկոցներ նոր | 1 | 30 | 250 |
| ոքր գնդակներ, փուչիկներ | 1 | 10 | 100 |
| մանկական դոշլիկներ | 1 | 30 | 600 |
| ունավորելու և նկարազարդ գրքեր, նկարչական պարագաներ | 1 | 110 | 1100 |
| որ տակաշորեր, ամրակներ, փաթթաշորեր | 1 | 20 | 50 |
| անրեր | 1 | 100 | 1200 |
| ուղամատիտներ (տուփ) | 1 | 110 | 1000 |
| իկնիկներ | 1 | 20 | 300 |
| ազակալներ | 1 | 15 | 200 |
| անկական վերնաշապիկ, շապիկ, ներքնաշոր | 1 | 5 | 50 |
| ուլպաներ նոր (զույգ) | 1 | 170 | 3500 |
| որ գլխարկներ, շարֆեր | 1 | 100 | 1200 |
| եռնոցներ նոր | 1 | 70 | 1100 |
| ետրակներ, բլոկնոտներ, գունավոր թուղթ | 1 | 110 | 500 |
| արկերներ (տուփ) | 1 | 80 | 1300 |
| աղեր, քարտեր, փազլներ, հաշվիչներ | 1 | 20 | 100 |
| այելիներ, նկարի շրջանակներ | 1 | 50 | 400 |
| րենական պիտույքներ. մատիտներ/գուն. մատիտներ (տուփ), գրչատուփ, գրիչ | 1 | 110 | 450 |
| ետիններ, Մատիտի սրիչներ | 1 | 20 | 200 |
| անկական կրծիչներ, չխչխկիկներ, ծծակներ | 1 | 20 | 200 |
| անոն, մկրատներ, սոսինձ | 1 | 18 | 110 |
| անկական ըմպանակ | 1 | 30 | 230 |
| ափուկ խաղալիքներ, շորից պայուսակ, քսակ | 1 | 110 | 400 |
| ռիկերներ / շերտ | 1 | 2 | 50 |
| ռամի խոզանակներ/խոզանակի տուփ | 1 | 40 | 383 |
| ոշտ խաղալիքներ | 1 | 30 | 150 |
| րիչներ/քիսիկներ/անձեռոցիկ - շորից և թղթից | 1 | 1 | 40 |
| ձանորդյա տուփեր (միայն տարաները) | 1 | 400 | 1300 |
| կողնային պարագաներ. ծածկոցներ, սպիտակեղեն, վերմակ | 11 | 415 | 1150 |
| զուստ և աքսեսուարներ | 55 | 570 | 3470 |
| գիենայի պարագաներ | 4 | 6 | 115 |
| րի մեքենա ձեռքի Singer | 1 | 14 | 400 |
| ղան | 1 | 91 | 700 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 100 | 2,927.0 | 22,298.00 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**28 դեկտեմբերի 2016 թվականի N Մ-1273-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)**
**քաղ. Երևան**

**«ՍԻՄՈՆՅԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ԹՈՒՄՈ» ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 01.1/80-2/28822-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 06/3-8/40153-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 02/14/17531-16 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 01/21.1/5041-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672) իրականացվող՝ 384,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» կենտրոնի ստեղծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«DW5 International sal» լիբանանյան կազմակերպության հետ (Tannous Building – 3rd Floor, Street 56 – Jisr Sector 77, Beirut 2077 7209, Lebanon) 2016 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճարտարապետական և հարդարման աշխատանքների իրականացում՝ 131,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Սիմոնյան» կրթական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի



պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն

Մարի Լու Փափազյանի կողմից

«22» Դեկտեմբերի 2016թ

«Տավուշի մարզի Կողբ համայնքում «Թումո» կենտրոնի ստեղծում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ Տավուշի մարզի Կողբ համայնքում Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, ուսումնական ծրագիր իրականացնելու նպատակով շենքային պայմանների ստեղծումն է: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Ծրագիրը իրականացվելու է Ջի էյչ ԷՄ բարեգործական հիմնադրամի կողմից Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության միջոցով (720,000,000 յոթ հարյուր քսան միլիոն դրամ), և Կողբ Հիմնադրամի կողմից (114,000,000 մեկ հարյուր տասնչորս միլիոն դրամ) հատկացված և հատկացվելիք նվիրաբերությունների հաշվին: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է Տավուշի մարզի Կողբ համայնքի 1-ին փողոցի 35/1 հասցեում, քաղաքաշինության ոլորտում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 384,000,000 (երեք հարյուր ութսունչորս միլիոն) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուն է՝ Կողբի և հարակից բնակավայրերի համայնքները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը իրականացվելու է մեկ փուլով 2016թ-ի սեպտեմբերի 27-ից մինչև 2018թ-ի սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական և այլ նմանատիպ աշխատանքների իրականացում և աշխատանքային նախագծերի համաձայնեցում, թողարկում և հաստատում – 73,000,000 (յոթանասուներեք |

2

| | | |
|---|---|---|
| | | միլիոն) դրամ, 27.09.2016-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների իրականացում – 284, 000,000 (երկու հարյուր ութսունչորս միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում – 15 000 000 (տասնհինգ միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.09.2018թ-ը,<br>• Վարչական ծախսեր - 12,000,000 (տասներկու միլիոն դրամ): |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից – 10,000,000 (տաս միլիոն) դրամ, 27.09.2016-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Ճարտարապետական, չափագրման, ինժեներական, դիզայներական, փաստաթղթերի թողարկման, նախագծերի իրականացման աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում արտերկրից – 63 000 000 (վաթսուներեք միլիոն) դրամ, 27.09.2016-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 227,200,000 (երկու հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր հազար) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման նյութերի և աշխատանքների ձեռք բերում արտերկրից – 56,800,000 (հիսունվեց միլիոն ութ հարյուր հազար) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.06.2018թ-ը,<br>• Շինարարական և բարեկարգման աշխատանքների ընթացքի տեխնիկական և հեղինակային հսկողություն, խորհրդատվական ծառայությունների ստացում, փաստագրման, հատակագծման և իրավունքի պետական գրանցման աշխատանքների ձեռք բերում ՀՀ-ից – 12,000,000 (տասներկու միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.09.2018թ-ը,<br>• Խորհրդատվական ծառայությունների ձեռք բերում արտերկրից – 3,000,000 (երեք միլիոն) դրամ, 01.03.2017-ից մինչև 30.09.2018թ-ը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված | • Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ – 8,000,000 (ութ |

| | | |
|---|---|---|
| | կազմակերպական ծախսերը | միլիոն) դրամ, 01.10.2016-ից մինչև 30.09.2018թ-ը,<br>• Գործուղման ծախսեր – 3,000,000 (երեք միլիոն) դրամ, 01.10.2016-ից մինչև 30.09.2018թ-ը,<br>• Գրասենյակային և այլ ծախսեր – 1,000,000 (մեկ միլիոն) դրամ, 01.10.2016-ից մինչև 30.09.2018թ-ը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Կողբի համայնքապետարանի և ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական տեսչության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

REPUBLIC OF ARMENIA YEREVAN FOUNDATION 01245672

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**28 դեկտեմբերի 2016 թվականի N Մ - 1274 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 23-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 01.1/80-2/28821-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 06/3-8/39795-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական կարմիր խաչի ընկերության 2016 թվականի դեկտեմբերի 19-ի N 532 գրությունը,* **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հրաչյա Վարդանյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218408) 2016 թվականի նոյեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀԿԽԸ-ի կենտրոնական գրասենյակի շենքի հիմնանորոգման նախագծահաշվային փաստաթղթերի կազմում՝ 1,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հայկական Կարմիր Խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանից
«19» դեկտեմբերի 2016թ.

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔ և ԱՌՈՂՋ ԾԵՐԱՑՈՒՄ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել տարեցների, քրոնիկ հիվանդություն և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը՝ ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով |
| 3. | Բարեգործը | Շվեյցարական Կարմիր Խաչ |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Լոռու և Շիրակի մարզեր, սոցիալ-առողջապահական ոլորտ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 788.009.250 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տարեցներ, հաշմանդամություն և քրոնիկական հիվանդություններ ունեցող անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի մայիսի 1- ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը |

Մ-16/9.9

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝<br>1. Տարեց և սահմանափակ կարողություններով անձանց համար որակյալ ինտեգրացված բժշկասոցիալական խնամքի հասանելիության բարելավում<br>2. Համայնքների կարողությունների բարելավում ՝ բնակչության խոցելի խմբերին աջակցելու և տեղային որոշումների կայացմանը վրա ազդեցություն ունենալու առումով (առողջ ծերացում )<br>3. ՀԿԽԸ ունի համապատասխան ռեսուրսներ համայնքային տնային խնամքի մոդել ներդնելու և համայքնային նախաձեռնություններին աջակցելու համար՝ հանդիսանալով վստահելի գործընկեր հանրային առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում<br>Ծրագրի շրջանակներում ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br><br>Ակնկալվող արդյունք 1<br>1.1 Համայնքային տնային խնամքի կառուցվածքի և համակարգի ներդնում:<br>Միջոցառումն իր մեջ ներառում է<br>• տարեցների կարիքների գնահատում<br>• համակագի ծախսարդյունավետության վերաբերյալ |



| | | |
|---|---|---|
| | | հետազոտություն,<br>• հնարավոր շահառուների տվյալների բազայի ստեղծում և վարում,<br>• տրամադրվող ծառայությունների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում և վարում,<br>• տնային խնամքի համայնքային կենտրոնների հիմնում, դրանց վերանորոգում և կահավորում<br>• տնային խնամքի կազմակերպում և իրականացում, ներառյալ տնային խնամք կազմակերպելու համար անհրաժեշտ պարագաների տրամադրումը, մասնավորապես՝ միանգամյա օգտագործման հիգիենիկ պարագաներ, քայլակներ, շարժական զուգարանակոնքեր, անկողնային հատուկ պարագաների և այլն,<br>• համագործակցություն և պարբերաբար հանդիպումներ ու միջոցառումներ շահագրգիռ կողմերի՝ ինչպես պետական կառավարման, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, կրթական հաստատությունների հետ,<br>• համակարգի ներդրման համար ՀԿԽԸ համապատասխան ներքին քաղաքականության համապատասխանեցում, այդ թվում՝ համակարգում ընդգրկված կամավորների կառավարման, արդյունքների դիտարկման և գնահատման մեխանիզմների մշակում կամ թարմացում:<br>Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի |

| | | |
|---|---|---|
| | Ն.16/9.9 | 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 91.115.000 ՀՀ դրամ:<br>1.2 Համայնքային տնային խնամքում ընգրկված աշխատակազմի և կամավորների կրթման համակարգի ներդնում: Միջոցառումը ներառում է՝<br>• տնային խնամք իրականացնելու նպատակով աշխատակազմի համալրում անհրաժեշտ որակավորմամբ աշխատակիցներով,<br>• ընդգրկված աշխատակիցների և կամավորների հատուկ դասընթացներ ստանալու վերաբերյալ կարիքների գնահատում,<br>• կարիքներին համապատասխան դասընթացների ձևավորում,<br>• մասնագիտացված բուժքույրերի, տնային խնամողների և կամավորների համար առանձնացված դասընթացների ձևավորում,<br>• մասնագիտացված բուժքույրերի, տնային խնամողների և կամավորների համար առանձնացված դասընթացների կազմակերպում և իրականացում<br>• տնային խնամքի ուղեցույցների մշակում, թարգմանություն և հրապարակում:<br>Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: |



| | | |
|---|---|---|
| | Ն.16/9.9 | Ընդհանուր արժողությունը՝ 130.930.000 ՀՀ դրամ:<br>1.3 Համայնքային տնային խնամքի համակարգ ներդնելու նպատակով համապատասխան նորմատիվ-կարգավորող հենքի ապահովում: Միջոցառումը ներառում է՝<br>• համակարգի կառավարման համար անհրաժեշտ ներքին կարգավորող փաստաթղթերի մշակում, հաստատում և ներկայացում,<br>• որակի վերահսկման համակարգի մշակում, սահմանում և ներդնում:<br>Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 3.130.000 ՀՀ դրամ:<br>1.4 Համայնքային տնային խնամքի համակարգ ներդնելու նպատակով համապատասխան գործընկերության հիմնում:<br>Միջոցառումը ներառում է՝<br>• հիմնական գործընկերների հետ փոխըմբռնման հուշագրերի ստորագրում և դերերի սահմանում<br>• ազգային և մարզային մակարդակներում պետական կառավարման մարմինների, տեղային ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների |

ընդգրկմամբ աշխատանքային խմբերի ստեղծում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 6.137.500 ՀՀ դրամ:

1.5 Համայնքային տնային խնամքի համակարգի ներկայացում և խթանում ազգային մակարդակում:

Միջոցառումը ներառում է՝

- մոդելի և դրա հիմնական բաղադրիչների սահմանում,
- մատուցվող ծառայությունների արժեքի հաշվարկ,
- մոդելի տնտեսական և սոցիալական առումով արդյունավետության վերաբերյալ հետազոտության իրականացում,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող հետազոտությանը տեխնիկական աջակցության տրամադրում,
- շահառուների կյանքի որակի փոփոխության վերաբերյալ հետազոտության իրականացում,
- նմանատիպ ծրագրեր իրականացնող երկրներ փորձի փոխանակման նպատակով և ուսուցողական այցերի



կազմակերպում,

- մոդելի ջատագովում ազգային մակարդակում որոշում կայացնողների շրջանում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 49.450.000 ՀՀ դրամ :

Ակնկալվող արդյունք 2

2.1 Համայնքային աշխատանքում մասնակցային մեթոդի ներկայացում:

Միջոցառումը ներառում է՝

- առողջ ծերացման գաղափարի և համայնքային մասնակցային աշխատանքի ներկայացում ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակում և ընտրված մարզերում,
- համայնքային մասնակցային աշխատանքի ներկայացում ընտրված համայնքներին,
- համայնքային ակտիվ խմբերի համար հաշվետվության և փորձի փոխանակման մեխանիզմների մշակում,
- համայնքային աշխատանքին առնչվող ներքին կանոնակարգող փաստաթղթերի մշակում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2017 թվականի

դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 3.530.000ՀՀ դրամ:

2.2 Համայնքային մասնակցային մեթոդի վերաբերյալ աշխատակազմի և կամավորների կրթական համակարգի ներդնում: Միջոցառումը ներառում է՝

- համայնքային ակտիվ խմբերի համակարգողի ընտրություն երկու մարզերում,
- ընդգրկված կամավորների և աշխատակիցների հատուկ դասընթացներ ստանալու վերաբերյալ կարիքների գնահատում,
- կարիքներին համապատասխան դասընթացների ձևավորում,
- համայնքային աշխատանքի ուղեցույցների մշակում,
- համայնքային աշխատանք իրականացնող այլ ազգային ընկերությունների հետ փորձի փոխանակում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 11.775.000 ՀՀ դրամ:

2.3 Համայնքի ներսում համագործակցության և հաղորդակցման բարելավում: Միջոցառումը ներառում է՝

- հանդիպումներ համայնքներում և համայնքային ակտիվ խմբերի ձևավորում,



- համայնքային խմբի անդամների համար դասընթացների կազմակերպում առողջ ծերացման և մասնակցային համայնքային աշխատանքի վերաբերյալ,
- համայնքի կարիքներին և գերակայություններին ուղղված քննարկումներ և հանդիպումներ համայնքներում,
- համայնքային խմբերի կարողությունների զարգացում ռեսուրսներ մոբիլիզացնելու, ծրագրեր ձևավորելու և իրենց մոտեցումները ջատագովելու վերաբերյալ,
- շահառուներին այցելություններ և աջակցություն ցուցաբերելու համար անհրաժեշտ տարրական գիտելիքների տրամադրում համայնքային խմբի անդամներին,
- միասնական նախաձեռնությունների և փոքրածավալ ծրագրերի իրականացում մի քանի համայնքային խմբերի կողմից,
- այլ համայնքներ փորձի փոխանակմանն ուղղված այցերի պարբերաբար կազմակերպում,
- համայնքի կարիքների համար ջատագովում,
- լավագույն փորձի հավաքագրում և հրապարակում,
- այլ համայնքներում հաջողված փորձի ներդնում,

- իրազեկման ակցիաների և կլոր սեղանների կազմակերպում,
- համայնքային խմբերի ֆինանսավորում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 78.405.000 ՀՀ դրամ:

Ակնկալվող արդյունք 3

3.1 Համայնքային տնային խնամքի և մասնակցային համայնքային աշխատանքի ներդրում թիրախ մարզերում: Միջոցառումը ներառում է

- Ծրագրի իրականացման և ներդրված սոցիալ-առողջապահական խնամքի համակարգի գործունեությունն ապահովելու տեսակետից համապատասխան մարզային մասնաճյուղերի կարիքների գնահատում,
- համայնքային տնային խնամքի համակարգի ներդրման և գործունեության, միջոցառումների, հանդիպումների և կլոր սեղանների կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության ապահովում,
- դժվարհասանելի համայնքների ներգրավման, համայնքային ակտիվ խմբերի պարբերական հանդիպումների, համատեղ միջոցառումների և փորձի փոխանակման, ինչպես նաև տնային



խնամքի շարժական բրիգադների միջոցով բոլոր շահառուների հավասարաչափ հասանելիության նպատակով տրանսպորտային միջոցներով ապահովում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 123.302.500 դրամ

3.2 Ծրագրի բաղադրիչների՝ համայնքային տնային խնամքի և մասնակցային համայնքային աշխատանքի ներդրման նպատակով համապատասխան կառուցվածքային և տեխնիկական ռեսուրսների բարելավում ազգային մակարդակում:

Միջոցառումը ներառում է ազգային մակարդակում ծրագրի իրականացման տեսակետից կարիքների գնահատում և դրա արդյունքներին համապատասխան ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված ռեսուրսների բարելավում:

Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 131.950.000 ՀՀ դրամ

3.3 Ծրագրի նպատակներին ուղղված և դրանց հասնելու նպատակով փորձի և կարողությունների բարելավում

Միջոցառումը ներառում է՝

| | | |
|---|---|---|
| | | • ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի կարողությունների գնահատում հատուկ մշակված գործիքակազմի օգտագործմամբ,<br>• մարզային մասնաճյուղերում պարբերաբար հանդիպումների կազմակերպում՝ որոշ կառավարման ֆունկցիաներ մասնաճյուղերին լիազորելու համար,<br>• ազգային և միջազգային հանդիպումներին մարզային ներկայացուցիչների մասնակցության ապահովում, փորձի փոխանակում,<br>• ծրագրերի գնահատման միասնական համակարգի մշակում:<br>Տևողությունը 2016 թվականի մայիսի 1-ից 2019 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդհանուր արժողությունը՝ 48.225.000 ՀՀ դրամ :<br>Կազմակերպչական ծախսեր՝ 110.059.250 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է<br>• տնային խնամք ապահովելու համար անհրաժեշտ պարագաներ, մասնավորապես՝ միանգամյա օգտագործման հիգիենիկ պարագաների, քայլակների, շարժական զուգարանակոնքերի, անկողնային հատուկ պարագաների և այլնի ձեռք բերում՝ 22.100.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, տնային խնամքի համայնքային կենտրոնները հագեցնելու նպատակով |



| | | |
|---|---|---|
| | | կահույքի և տեխնիկայի ձեռք բերում՝ 23.150.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• դժվարհասանելի համայնքները ծրագրում ներգրավելու, համայնքային ակտիվ խմբերի համատեղ աշխատանքը ապահովելու, ինչպես նաև տնային խնամքի շարժական բրիգադների միջոցով բոլոր շահառուների համար հասանելիությունը ապահովելու նպատակով ավտոմեքենաների ներկրում կամ ձեռքբերում՝ 60.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• վառելիքի ձեռքբերում և մեքենաների պահպանման ծախսեր՝ 38.400.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• թիրախ մարզերի մարզային մասնաճյուղերը, համայնքային ինտեգրացված խնամքի կենտրոնները ինտերնետով և կապի այլ միջոցներով ապահովում, կոմունալ այլ ծառայություններ 31.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• միջոցառումների, հանդիպումների, կլոր սեղանների կազմակերպման նպատակով դահլիճի վարձակալության վճարներ, սննդի և գրենական պիտույքների, կամավորների խրախուսական միջոցների ձեռք բերում 35.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• համայնքային ինտեգրված խնամքի կենտրոնների, ծրագրի |

| | | |
|---|---|---|
| | | թիրախ մարզային մասնաճյուղերի, ՀԿԽՄ կենտրոնական գրասենյակի նախագծանախահաշվարկային աշխատանքներ և վերանորոգման ծախսեր՝ 81.225.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• անձնակազմի գործուղման ծախսեր՝ ներառյալ ավիատոմսերի ձեռք բերում՝ միջազգային գործուղումների դեպքում և հյուրանոցային ծառայություններ՝ տեղական գործուղումների դեպքում՝ 46.780.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• թարգմանչական ծառայություններ, հետազոտական աշխատանքներ, կրթական նյութի մշակում և տպագրություն 28.875.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,<br>• արտաքին աուդիտի համար նախատեսված է 10.000.000 ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսերը, նախատեսված 2016թ. մայիսի 1-ից 2019թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար, կազմում են 110.059.250 ՀՀ դրամ: Դրանք ներառում են գործունեության համար անհրաժեշտ այնպիսի ծախսեր, ինչպիսիք են գույքի պահպանման, արտաքին աուդիտի, բանկային ծառայությունների վճարներ՝ 49.460.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, կոմունալ ծառայությունների համար նախատեսված ծախսեր՝ 16.125.000 ՀՀ դրամ ընդհանուր |



| | | |
|---|---|---|
| | | արժողությամբ, համակարգչային տեխնիկայով ապահովում 6.950.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ, այլ անուղղակի ծախսեր՝ 37.524.250 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ : |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ պետական կառավարման լիազոր մարմինների, մասնավորապես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ինչպես նաև թիրախ մարզերի մարզպետարանների հետ փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում սերտ համագործակցությամբ: Տարեցների խնամքով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից ստեղծված Տարեցների պաշտպանության ցանցի շրջանակներում իրականցվում է սերտ համագործակցություն ոլորտում գործող հասարակական և ակադեմիական կազմակերպությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Շվեյցարական Կարմիր Խաչին: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ համաձայն սահմանված կարգի: |